

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԻԿՏՈՐ ԼԻՊԱՐԻՏԻ ԿԱՏՎԱԼՅԱՆ

**ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՆՐԱ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌԼՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՇՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԵՏ**

Ժ. 02. 01- «Հայ ոց Լեզու» մասնագիտությունը ամբ
բանասիրական գիտությունը ներքի դոկտորի գիտական
աստիճանի
հայցման ատենախոսություն

ՍԵՂԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսությունը թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
Հ. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում:

Պաշտոնակատար
ընդդիմախոսներ՝
գիտություն ու ներքին դոկտոր,

բանասիրական

պրոֆեսոր Ռ.Կ. Սաքապետյան

բանասիրական գիտություն ու ներքին
դոկտոր,
պրոֆեսոր Գ. Կ. Խաչատրյան

դոկտոր,
Աբաջյան

բանասիրական գիտություն ու ներքին
պրոֆեսոր Ա. Յ.

Առաջատար կազմակերպություն՝

ԽԱՐՈՎյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. դեկտեմբերի 19-ին՝
Ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում
գործող ԲՈՅ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի
նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գ. Լուսավորչի 15):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ.
Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առավել է 2016 թ. նոյեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

բանասիրական գիտություն ու ներքին թեկնածու,

Ն. Մ.

ՍԻՄՈՆՅԱՆ

դոցենտ

ԱՍԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Յետագոտու թյան թեմայի արդիականությունը:

Յայ բարբառագիտությունը և զարգացման ներկա փուլում արդիական են բարբառագիտական տեսական խնդիրները արծարծումը, առանձին բարբառների՝ տարբեր հայեցակետերով համակարգային քննությունը, մերձավոր բարբառների, բարբառային խմբերի համեմատական և պատմական ուսումնասիրությունը: 19-րդ դարից սկսած՝ զգալի աշխատանքներ են կատարվել բարբառների առանձնակի ուսումնասիրության ու նկարագրություն ունի որոտում: Բազմաթիվ բարբառների վերաբերյալ հետազոտություն են ներքը մեծապես նպաստել են ոչ միայն բարբառային հայերենի վերաբերյալ գիտական պատկերացումների ձևավորմանը, այլ նաև հայոց լեզվի պատմության բազմաթիվ խնդիրների լուծմանը: Կենդանի գործառույթ, բայց միևնույն ժամանակից ուսումնասիրության չենթարկված Բայագետի բարբառի՝ համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով ու շրջակա բարբառների համեմատությունում բարբառագիտությունը կարևորվում է ոչ միայն հայ բարբառների նկարագրող լրացնելու, այլ նաև ընդհանրապես հայոց լեզվի ուսումնասիրության համար փաստական նյութ տրամադրելու, պատմական ու համեմատական բարբառագիտության ունի տեսությունում առկա բացը ըստ հնարավորին լրացնելու առումներով:

Յետագոտու թյան նպատակը և խնդիրները:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել Բայագետի բարբառի հնչյուն նախերակական և բառապաշարային համակարգերի ամբողջական նկարագրող, վեր հանել բարբառային այդ միավորի առանձնահատկությունները, ուրվագծել պատմական զարգացման ընթացքը, բացահայտել պատմական հայրենիքում հարևան Դիարիսի, Վանի, Մշո, Խոյ-Մարաղայի և Արարատյան բարբառների հետ առնչությունները, ընդհանրություններն ու տարբերությունները: Այդ նպատակը իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ խնդիրները.

ա) ներկայացնել բարբառի հնչյունական ու հնչյունային համակարգերը, բացահայտել դրանց առանձնահատկությունները, գործառույթ հնչյունական օրենքներն ու հնչյունափոխական օրինաչափությունները,

բ) նկարագրել բառապաշարի շերտերը, ներկայացնել բառապաշարի հարստացման աղբյուրները, իմաստաբանական իրողություններն ու բառակազմական օրինաչափությունները,

գ) տալ ձևաբանական համակարգի ամբողջական նկարագրող, վեր հանել անվանական ու բայական համակարգերի առանձնահատկությունները, չթեքվող խոսքի մասերի իմաստագործառական յուրահատկությունները,

դ) բացահայտել Բայագետի բարբառի պատմական զարգացման և ներկա համակարգի ձևավորման ընթացքը ներկայացնող լեզվական փաստերը,

ե) վեր հանել Բայ ազետի և շրջակա բարբառների ընդհանրություններն ու տարբերությունները, որոշել հարևան բարբառների ազդեցություններով պայմանավորված իրողությունները,

զ) ներկայացնել Բայ ազետի և շրջակա բարբառների փոխհարաբերությունների վիճակագրական պատկերը՝ ըստ հնչյուննաբերականական և բառային գույքանությունների:

Ուսումնասիրության առարկան և օգտագործված աղբյուրները:

Ուսումնասիրության առարկան Բայ ազետի բարբառի՝ Գավառ քաղաքի և շրջակամեկ տասնյակից ավելի գյուղերի խոսվածքներն են, որոնց դիտարկումները կատարվել են տասնյակ տարիներ բարբառախոս այդ միջավայրում ունեցած շփումների, նաև վերջին շրջանում կատարած դաշտային աշխատանքների, հարցումների և ձայնագրության եղանակներով: Աշխատանքի կատարմանը նպաստել է նաև մեր՝ Բայ ազետի բարբառի կրող լինելու հանգամանքը: Օգտագործել ենք նաև Բայ ազետի բարբառով մինչ այժմ հրատարակված նյութերը¹: Շրջակա բարբառների իրողություններին դիտարկման համար իբրև հիմնական աղբյուր ծառայել են Յ.Աճառյանի «Քննությունն Վանի բարբառի» (Ե., 1952), Մ.Ասատրյանի «Ուրմիայի /տոյի/ բարբառը» (Ե., 1962), Մ.Բաղդասարյան-Թախալցյանի «Մշո բարբառը» (Ե., 1958), Ռ.Մարկոսյանի «Արարատյան բարբառ» (Ե., 1989), Վ.Խաչատրյանի «Վարդենիսի բարբառը» (Ե., 2004), Գ.Ջահուկյանի «Յայ բարբառագիտություն» ներածություն» (Ե., 1957) բախատությունները, նաև ՅՅ ԳԱԱ լեզվի ինստիտուտի՝ Յայ երենի բարբառագիտական առկա ծրագրով հավաքված նյութերը, բարբառագիտական այլ աշխատություններ: Մշո և Դիադիսի բարբառների վերաբերյալ հետազոտություններ կատարել ենք նաև ՅՅ Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում՝ դաշտային աշխատանքների ընթացքում: Նյութեր ենք քաղել թեմային առնչվող բառարաններից: Ուսումնասիրության մեջ տեսական հարցեր արծարծելիս նկատի ենք ունեցել Մ.Աբեղյանի, Ա.Աբրահամյանի, Է.Աղայանի, Յ.Աճառյանի, Ա.Այտընյանի, Ա.Գրիգորյանի, Ա.Ե.Խաչատրյանի, Ռ.Դազարյանի, Ա.Դարիբյանի, Լ.Մսերյանցի, Յ.Մուրադյանի, Զ.Պատկանյանի, Գ.Ջահուկյանի և այլոց աշխատանքներն ու դիտարկումները:

Յեռագրության գիտական նորույթը:

Բայ ազետի բարբառը առաջին անգամ է ենթարկվում ամբողջական ու համակողմանի քննության, բարբառային առանձին

¹ Տե՛ս Ս.Նավասարդեանց, Յայ ժողովրդական հեքիաթներ, 5-րդ գիրք, Տիփուս, 1889, էջ 79-80, Մ.Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ճովագարդ գաւառի որ այժմ Նոր-Բայ ազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 377-378, «Ազգագրական հանդես», XIII գիրք, 1906, 1, էջ 37-82, XIV գիրք, 1906, 2, էջ 69-85, XIX գիրք, 1910, 1, էջ 115-150, Յայ ազգագրությունն և բանահյուսությունն, 11, Ե., 1980, էջ 166, Վ.Կատվայան, Զօլոնա իմնօք-չօնօք (Զվարճապատումներ Բայ ազետի բարբառով), Ե., 2009, 232 էջ:

համակարգի նկարագրությանը ունենում վերլուծությանը կատարվում են համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերի գուգորդումով, շրջակա բոլոր բարբառների հետ համեմատությանը, որևէ տարածքի բարբառների փոխարարությունը ունենեքը ներկայացվում են գուգաբանական-վիճակագրական, բառավիճակագրական սկզբունքներով, լեզվական շատ իրողություններ ստանում են նոր մեկնաբանություն:

Յետագոտության մեթոդները:

Աշխատանքում հետագոտության համաժամանակյա և տարաժամանակյա սկզբունքներով գուգահեռ գործածումը թույլ է տալիս ստանալ բարբառային համակարգի արդի նկարագիրը՝ միաժամանակ ներկայացնելով տարբեր իրողություններին ադբյունները և ուրվագծելով բարբառի պատմական զարգացմանը նթացքը: Ուսումնասիրությանը նթացքում նկարագրական, վերլուծական, պատմական մեթոդների հետ կիրառել ենք նաև հետագոտության համեմատական, գուգադրահամեմատական, լեզվաբանական աշխարհագրությանը, ընկալողական, գուգաբանական-վիճակագրությանը, բառավիճակագրությանը և եղանակները;

Ատե՛նախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքում արծարծվում և նորոգվի են մեկնաբանվում տեսական բնույթի մի շարք հարցեր, ինչպիսիք են բարբառի ըմբռնումը, բարբառների առաջացման ու զարգացման վերաբերյալ պատկերացումները, առաջադրվում և հիմնավորվում է *բարբառային հայերեն, խոսվածքային հատկանիշ* հասկացություններին կիրառություն, բարբառային հատկանիշների տեսական քննությանը ու դասակարգման, բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքների հետագա մշակման ու ճշգրտման անհրաժեշտությունը: Արված դիտարկումներն ու եզրահանգումները կարող են իրենց նպատեքերել հայ բարբառագիտության տեսությանը հետագա զարգացմանը: Յետագոտությունը կարող է դառնալ այլ բարբառների՝ շրջակա լեզվական դրսևորումների համեմատությանը նմանատիպ ուսումնասիրությանը կատարելու նախորինակ: Ուսումնասիրությանը արդյունքները կարող են կիրառվել հայերենի բարբառների նկարագրությանը նվիրված աշխատանքներում, բուհական դասընթացներում, ուսումնական ձեռնարկներում:

Ատե՛նախոսության փորձաքննությունը:

Ատե՛նախոսության հիմնական արդյունքներն ու դրոյթները արտացոլված են հրատարակված 25 հոդվածներում և հանրապետական ու միջազգային գիտաճողովների գեկուցումներում, 4 մենագրություններում: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում և երաշխավորվել հրատարակային պաշտպանությանը:

Ատե՛նախոսության կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից (շրջակա բարբառների հոլովական հարացույցներ, Բայագետի բարբառի բայի խոնարհման հարացույցի ընդհանուր նկարագիրը, աղյուսակներ, բառարաններ, նմուշներ Բայագետի բարբառով):

ՍՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն մեջ արծարծվում են տեսական բնույթի մի շարք հարցեր: Ուսումնասիրության բնույթը նկատի ունենալով՝ նախ հարկ ենք համարել անդրադառնալ բարբառի ըմբռնմանը հայլեզվաբանության մեջ: Լեզվի այս գոյածնը մեկնաբանելիս ուշադրության արժանի դիտարկումներ են կատարել Ք. Պատկանյանը, Ա.Այտընյանը, Հ.Աճառյանը, Մ.Աբեղյանը, որոնց պատկերացմամբ բարբառը լեզվի բնական և չնորմավորված, բազմազանություններով բնութագրվող վիճակ կամ տեսակ է: Խորհրդային տարիներին հայ իրականության մեջ բարբառները բնութագրվել են իբրև լեզվի ճյուղավորումներ, յուրաքանչյուր բարբառ համարվել է ընդհանուր լեզվի ձևախիթված վիճակ՝ այս կամ այն տարածքային հատվածում: Մեր կարծիքով՝ նման մեկնաբանությունը մասամբ է արտահայտում լեզվի այդ տարբերակի էությունը, ուստի նպատակահարմար ենք համարում բարբառը բնութագրել իբրև տվյալ լեզվի՝ գիտակցական նորմավորման ու կարգաբերման չենթարկված, բնական գոյածնը կամ վիճակը ներկայացնող համակարգ, որն իր հատկանիշների յուրահատուկ գույություններով տարբերվում է նույն լեզվի՝ այլ տարածքներում դրսևորվող համանման համակարգային դրսևորումներից: Բարբառները իրենց հիմնական հատկանիշներով նույնական են, սակայն յուրաքանչյուր դեպքում ընդհանուր հատկանիշները ուղեկցվում են մասնավոր հատկանիշների յուրահատուկ փնջերով, որոնցով էլ բարբառները դառնում են նույն լեզվի տարբեր գոյածներ: Բարբառների առաջացման բուն պատճառը լեզվի բնական վիճակի անմիօրինակությունն է՝ պայմանավորված լեզուն կրողների և օգտագործողների բնական անմիօրինակությամբ և ապա նաև՝ բոլոր լեզվակիրների միասնական հաղորդակցման անհնարիությունը: Բարբառների ամբողջությունը ներկայանում է իբրև բարբառային հայերեն, որի հիման վրա էլ ձևավորվել են խոսակցական և գրական հայերենները: Բարբառային հայերենի միասնականությունը ապահովում են ընդհանրությունները, իսկ նրա էությունը առաջին հերթին բնութագրում են լեզվական իրողությունների տարբերակային դրսևորումները: Տվյալ լեզվի շրջանակներում տարբերակային միավորների ու հատկանիշների ոչ գիտակցական, պատմականորեն ձևավորված յուրօրինակ համատեղումը լեզվական որևէ հանրության խոսքում առաջ է բերում համակարգի առանձին դրսևորում՝ բարբառային միավոր: Որևէ բարբառային միավորի

համար բնութագրական են ոչ միայն յուրահատուկ հատկանիշները, այլ նաև հատկանիշների յուրահատուկ փնջերը, որոնք դիտարկելի են բարբառային լեզվի այլ դրսևորումների շրջապատում: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Բայագետի բարբառի լեզվական իրողությունները քննում ենք պատմական հայրենիքում հարևան Արարատյան, Խոյ-Մարաղայի, Վանի, Սշո, Դիադիևի բարբառների համեմատությամբ, որը թույլ է տալիս մեկնաբանել նաև շրջակա բարբառների որոշ իրողություններ: Ուսումնասիրության ոլորտում այդ բարբառների ընտրությունը հիմնականում պատմական հարևանությամբ պայմանավորված լինելուց զատ՝ պատճառաբանվում է նաև նրանով, որ դրանք ներկայացնում են հայ բարբառների երեք՝ Ում (Արարատյան), Կը (Վանի, Մուշի, Դիադիևի), Լիս (Խոյ-Մարաղայի), ճյուղերն էլ: Բացի այդ, հաշվի են առնվել մասնավոր բնույթի հետևյալ հանգամանքները. ա) երկար ժամանակ Բայագետի բարբառային միավորը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ, բ) կարծիք է հայտնվել, որ Բայագետի բարբառային միավորը ներկայացնում է Արարատյան և Սշո բարբառների խառնուրդ, գ) հինհայերենյան *հ*-ի դիմաց */չ*-ի առկայությունը հատուկ է Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադիևի, Բայագետի բարբառներին, Սշո բարբառի մի հատվածին, շրջակա մեկ-երկու այլ միավորների: Բարբառների փոխհարաբերությունները արտահայտվել են տարբեր դասակարգումներով, որոնք բոլորն էլ արտացոլվում են այս աշխատանքում, բայց քանի որ բազմահատկանիշ դասակարգումը թույլ է տալիս առավել հստակ ու համակողմանիորեն որոշել այդ հարաբերությունները, շրջակա բարբառների հետ Բայագետի բարբառի առնչությունները ներկայացրել ենք նաև գուգաբանական-վիճակագրական սկզբունքի գործադրմամբ:

Բարբառային լեզուն գտնվում է հարափոփոխ վիճակում, միաժամանակ այն իր մեջ համատեղում է լեզվի զարգացման տարբեր շրջանների վերաբերող իրողություններ: Բարբառի արդի վիճակի վերլուծությանը ամբողջական կարող է լինել, եթե կատարվում է պատմական շերտերի, իրողությունների ձևավորման ընթացքի, զարգացման ուղու դիտարկմամբ: Որոշակի ժամանակահատվածում բարբառի զարգացման ընթացքը հնարավոր է դիտարկել նաև գրավոր աղբյուրների օգնությամբ (դրանց առկայությունը դեպքում): Բայագետի բարբառով գրի առնված նյութերի հայտնի գալիս 19-րդ դարի վերջերից սկսած:

Առաջին գլխում («Բայագետի բարբառը և

պատմաաշխարհագրորեն նրան մերձավոր բարբառները») ներկայացվում են բարբառի վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ եղած դիտարկումներն ու մեկնաբանությունները, Բայագետի բարբառի տարածական հիմքերը և դրանցում տեղի ունեցած տեղաշարժերը, քննության են ենթարկվում Բայագետի բարբառի տարբերակային դրսևորումները, տրվում են շրջակա բարբառների ընդհանուր բնութագրերը:

Բայագետի բարբառի վերաբերյալ առաջին տեղեկությունները և գիտական մեկնաբանությունը գտնում ենք

Յ.Աճ առյ անի «Յայ բարբառագիտութիւն» աշխատութեան մեջ, որտեղ այն համարվում է երևանի բարբառի երեք ենթաբարբառներից մեկը՝ «Պայագիտի ենթաբարբառ» անվանումով²: Ա.Ղարիբյանի կարծիքով՝ «Արարտայան բարբառը, խառնվելով Մշո բարբառի արևելյան և հյուսիս-արևելյան (Արճեշ) հատվածին, տվել է Նոր-Բայագեդի ենթաբարբառը»³: Նախորդների համեմատությամբ Բայագեդի բարբառի վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ է տալիս և առաջին անգամ բարբառիս հատկանիշները քիչ թե շատ հանգամանորեն ներկայացնում Ռ.Բաղրամյանը «Յայերեն բարբառներ. Սևանալճի ավազանի խոսվածքները» աշխատության մեջ⁴: Յեղիսակը ընդհանուր առմամբ հարագատորեն է ներկայացնում «Բայագեդի ենթաբարբառի» հնչյունական և ձևաբանական հիմնական առանձնահատկությունները, սակայն մի շարք դեպքերում վերագրվող հատկանիշները Բայագեդի բարբառին բնորոշ չեն կամ ճիշտ չեն արտացոլում իրավիճակը: Բայագեդի բարբառային միավորը առաջին անգամ առանձին բարբառ (*Բայագեդի բարբառ* անվանումով) դիտարկվեց Գ.Ջահուկյանի կողմից՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման աղյուսակում: Ըստ այդմ՝ բարբառների արևելյան խմբակցության Արարտայան կամ հյուսիսարևելյան բարբառախումբը կազմում են երևանի կամ Արարտայան, Ջուղայի, Բայագեդի, Աստղախանի և Արդվին-Թբիլիսիի բարբառները, ընդ որում՝ Բայագեդի բարբառը ներկայացվում է մեկ՝ Կամո (այժմ՝ Գավառ), միավորով⁵: Գ.Ջահուկյանը կատարել է նաև 5-րդ դարի հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգում⁶ և հնարավոր հարավարևելյան միջբարբառի շրջանակներում ընդգրկել է Կոգովիտի (Կամո լճի Նոր-Բայագեդ-Բայագեդ /Ղարույնք/), Ջուղայի, Չահարմապի, Մարապի ենթաբարբառները, Պարսկահայ քիմիչենթաբարբառը⁷: Յայլեզվաբանության մեջ Բայագեդի բարբառի առանձին իրողություններից ուշադրության արժանացնել են դարձել շնչեղ ձայնեղ բաղաձայնները: Դրանց փորձառական ուսումնասիրությամբ ու դիտարկումներով զբաղվել են Ա.Յ.Խաչատրյանը, Ա.Յանեյանը: Բայագեդի բարբառի հնչյունական իրողություններին ըստ անհրաժեշտության անդրադարձել է նաև Յ.Մուրադյանը:

Բայագեդի բարբառով ներկայումս խոսում են ՅՅ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և շրջակա մեկ տասնյակից

² Տե՛ս Յ.Աճ առյան, Յայ բարբառագիտութիւն.- Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների, Էմիւնան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 33:

³ Ա.Ղարիբյան, Յայ բարբառագիտութիւն, Ե., 1953, էջ 219 – 220:

⁴ Ռ.Բաղրամյան, «Յայերեն բարբառներ. Սևանալճի ավազանի խոսվածքները», Ե., 1972, էջ 11-34:

⁵ Տե՛ս Գ.Ջահուկյան, Յայ բարբառագիտութիւն ներածութիւն, Ե., 1972, էջ 135:

⁶ Տե՛ս Նշվ. աշխ., էջ 180 – 192:

⁷ Տե՛ս Նշվ. աշխ., էջ 185:

ավելի գյուղերում, որոնց բնակիչների նախնիները գաղթել են
Բայ ազե տ քաղաքից և հարակից բնակավայրերից, մասամբ նաև Վանից,
Խոյից, Մուշից, Ալաշկերտից և այլ վայրերից: Մինչև 19-րդ դարի
սկզբները Բայ ազե տի բարբառը գործառու մ էր Արևմտյան
Հայաստանի Բայ ազե տի գավառակում, որը Դիադինի, Խամուրի,
Նահինի, Ալաշկերտի, Խալիյադի գավառակների հետ կազմում էր
Բայ ազե տի գավառը՝ համանուն կենտրոնով: Հյուսիսից գավառին
սահմանակից էին Կարսի մարզն ու Երևանի նահանգը, արևելքից՝
Պարսկաստանը, հարավից՝ Վանի նահանգը, արևմուտքից՝ Խնուսի և
Բասենի գավառակները: Այս աշխարհագրական միջավայրում
Բայ ազե տի բարբառը արևմուտքից սահմանակից էր Դիադինի,
արևելքից՝ Խոյ-Մարաղայի բարբառներին, հարավից՝ Վանի, հյուսիսից՝
Արարատյան բարբառներին, հյուսիս – արևմուտքից՝ Մշո
բարբառի Ալաշկերտի խոսվածքին: Պատմական հանգամանքների
բերումով 1830թ. բայ ազե տցիները զանգվածաբար գաղթում և
հաստատվում են Սևանալճի ավերին: Բայ ազե տ քաղաքից գաղթած-
ները հիմնվում են պատմական Գեղարքունիաց գավառի Գավառ կամ
Գավառենի ամալի բնակավայրում, որը 1850 թ. ստանում է քաղաքի
կարգավիճակ և վերանվանվում Նոր Բայ ազե տ (հետագայում՝ Կամո,
ներկայումս՝ Գավառ): Բայ ազե տ քաղաքի շրջակա գյուղերից եկած-
ներն էլ հաստատվում են Գավառի մերձակա տարածքներում և
հիմնում մոտ մեկ տասնյակ բնակավայրեր: Գավառ քաղաքը և
բայ ազե տցիների սերունդներով բնակեցված բնակավայրերը 1930թ.
կազմում են Նոր Բայ ազե տի շրջանը, որը հետագայում
վերանվանվում է Կամոյի շրջան: Այս տարածքը գտնվում է
Ալաշկերտից և Մուշից, նաև Դիադինից գաղթածների
սերունդներով բնակեցված Մարտունու և հիմնականում Մակուից,
ապա Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գաղթածների
սերունդներով բնակեցված Սևանի տարածաշրջանների միջև:
Բայ ազե տի բարբառը բայ ազե տցիների սերունդների միատարր
միջավայրում մինչ օրս անխաթար պահպանած Գավառի
տարածաշրջանը ընդգրկված է Գեղարքունիքի մարզում և
անմիջական շփումներ չունի ինչպես Արարատյան ու Խոյ-
Մարաղայի, այնպես էլ Դիադինի բարբառները ներկայացնող
բնակավայրերի հետ:

Թե՛ 19-րդ և թե՛ 20-րդ դարերի սկզբներին պատմական հայ-
րենիքից գաղթած բայ ազե տցիներ բնակություն են հաստատել
Արևելյան Հայաստանի նաև այլ վայրերում, հայտնվել
բարբառախոս այլ միջավայրերում: Ժամանակի ընթացքում սրանց
սերունդները լրիվ կամ մասամբ կորցրել են մայրենի բարբառը: 20-
րդ դարի սկզբներից Բայ ազե տի բարբառը դարձրել է գործառել
պատմական հայրենիքում:

Լինելով հայերենի տարբերակային մի դրսևորում՝
Բայ ազե տի բարբառը բնութագրվում է ներքին
տարբերակայնության բազմազան արտահայտություններով, որոնք
ներկայանում են երեք եղանակով. ա) ներհամակարգային տարբերա-
կայնություն և նույն լեզվակիրների խոսքում, բ)

Ներհամակարգային տարբերակայնությունն տարբեր լեզվակիրների խոսքում և գ) տարհամակարգային տարբերակայնություն: Նույն լեզվակիրների խոսքում տարբերակային դրսևորումների հայտնաբերումը ինչպես հնչյունաբերականական, այնպես էլ բառապաշարային իրողությունները: Ներհամակարգային տարբերակայնությունը տարբեր լեզվակիրների խոսքում հիմնականում պայմանավորված է լեզվական հանրություն սեռային և տարիքային անհամասեռությամբ: Բարբառում իրենց յուրահատկություններով որոշակիորեն առանձնանում են ինչպես կանանց ու տղամարդկանց, այնպես էլ համագոյակից տարբեր սերունդների (նաև մանուկների) խոսքերը: Բարբառային լեզվի բնորոշ հատկանիշներից է նաև տարհամակարգային տարբերակվածությունը, երբ լեզվական տարբեր հանրությունների հանդես են բերում խոսվածքային յուրահատկություններ: Բայազետի բարբառը յուրահատկություններ է հանդես բերում տարածական բուրդ դրսևորումներում, առանձին դեպքերում՝ նույնիսկ նույն համայնքի ներսում՝ պայմանավորված երևանիչների նախնիների ծագմամբ: Նկատելի է, որ խոսվածքները միմյանցից տարբերվում են ինչպես խոսվածքային, այնպես էլ բարբառային հատկանիշներով: Թերևս խոսվածքները տարբերակող բարբառային հատկանիշները հիմնականում այլ բարբառների ազդեցության կամ ենթաշերտային իրողությունների հետևանք են, բայց հնարավոր է, որ դրանք լինեն նաև մարդկամ նոր ձևավորվող երևույթներ: Այնուամենայնիվ, խոսվածքները որոշակի ընդհանրություններով կազմում են խմբեր, ընդ որում՝ այդ խմբավորումը հիմնականում պայմանավորված է համայնքների բնակիչների ծագումով:

Բայազետի բարբառի ներկա համակարգը ձևավորվել է պատմական հայրենիքում հարևան Դիադիևի, Վանի, Մշո, Խոյ-Մարաղայի և Արարատյան բարբառների հետ մշտական շփումների ու փոխազդեցությունների պայմաններում: Ըստ ձևաբանական դասակարգման՝ Արարատյան բարբառը Բայազետի բարբառի հետ ներկայացնում է Ում ճյուղը, Կը ճյուղին են պատկանում Դիադիևի, Վանի և Մշո բարբառները, Լիս ճյուղին՝ Խոյ-Մարաղայի բարբառը: Ըստ հնչյունաբանական դասակարգման՝ Բայազետի բարբառի պես քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեն Արարատյան, Մշո և Դիադիևի բարբառները, երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ ունեն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները: Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Արարատյան բարբառը Բայազետի բարբառի հետ ընդգրկված է արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում, Վանի և Դիադիևի բարբառները՝ արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում, Մշո բարբառը՝ արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական բարբառախմբում, իսկ Խոյ-Մարաղայի բարբառը ներկայացնում է արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի կամ հարավարևելյան բարբառախումբը:

Երկրորդ գլխում

(«Բայ ազետի բարբառի հնչյունական յուրահատկությունները՝ շրջակա բարբառների համեմատությամբ») վեր են հանվում բարբառի հնչյունական համակարգի ամանձնատկությունները, ներկայացվում են հնչե-րանգային ու հնչյունափոխական իրողությունները: Անդրադարձ է կատարվում համակարգի պատմական զարգացմանը, շրջակա համանման համակարգերի հետ հարաբերություններին:

Բայ ազետի բարբառն ունի ձայնավոր 9 հնչյուններ (*ա, օ/ո, է, ե, ի, ու, օ, ը*), որոնք ներկայացնում են նույնքան հնչույթներ (*ա, օ, է, ե, օ, ո, ի, ու, ը*): Ա հնչույթն ունի երկու տարբերակ՝ *ա* և *օ*, որոնցից առաջինը գրական հայերենի աի համեմատ ունի որոշ չափով ավելի հետին և ստորին դիրք, իսկ երկրորդը ներկայացնում է օասերտարտասանություն: Այս երկու տարբերակները գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ. շրթնայնացած *օ-ն հանդես է գալիս բացարձակ բառակզբում և բառակզբի՝ լարվածությամբ բնորոշվող բաղաձայններից հետո, իսկ ա-ն գործառնում է մյուս դիրքերում: Քմայնացած օ-ի դրսևորումները պայմանավորված արտաբերական յուրահատկությամբ են լարված չեն. այն հիմնականում հանդիպում է փոխառյալ բառերում, բայց նաև՝ բնիկ արմատներում և կազմություններում: Ինքնուրույն հնչույթ է և աի հետգտնվում է իմաստատարբերակից հարաբերության մեջ: Բայ ազետի բարբառում *օ* և *օ* միավորների և շրջակա բարբառներում *օ* ձայնավորի դրսևորումների դիտարկում-ները վեր են հանում այդ երկու հնչյունների գործառնության հետ կապված մի ընդհանրություն: Եթե Բայ ազետի բարբառի բառակզբի՝ արտասանական լարվածությամբ բնույթագրվող բաղաձայնները պայմանավորում են իրենց հաջորդող աի շրթնայնացում, ապա «Աճառյանի օրենքի» դրսևորումով բնութագրվող շրջակա բարբառներում նույն դիրքում բացառվում է աի (նաև մյուս ձայնավորների) քմայնացումը: Եվ այս իմաստով՝ թերևս կարելի է «Աճառյանի օրենքը» կարևորել ոչ միայն քմայնացման առավել բնորոշ դիրքը նշելու, այլ նաև (և գուցե ավելի շատ) քմայնացումից ազատ մնացած դիրքը մատնանշելու ամումով: Բայ ազետի բարբառի մյուս ձայնավորներից հետաքրքրություն են ներկայացնում երկբարբառային ու ե հնչյունները: Սրանցից առաջինը արտասանությամբ նույնանում է *օ* հնչյունի հետ, և փաստորեն օաարտասանությունը ձեռք է բերում գերհնչույթի (*օ/ո*) արժեք, որը ըստ դիրքային բաշխման ներկայացնում է երկու տարբեր հնչույթներ՝ *ա* (բացարձակ բառակզբում և բառակզբի լարված հնչյուններից հետո) և *ո* (բազմավանկ բառերի շեշտակիր վանկում, միավանկ բառերի բաղաձայնահաջորդ դիրքում⁸): Երկրորդը, ի տարբերություն այլ բարբառների *ի* է արտասանության, ունի ավելի բաց ավարտ:*

⁸ Այս դեպքում առկա է հնչույթային հակադրության՝ նաև ըստ դիրքի չեզոքացման հնարավորություն, որը բարբառումս իրականանում է մեկ-երկու օրինակներում, ինչպես՝ *կթ* (կօվի) – *կոթ* (բահի), *մՄ* (մայրիկ) – *մոմ*:

Բարբառում *n-օ* և *ե-է* հարաբերությունները արտացոլում են (առաջին դեպքում՝ մասնակիորեն, իսկ երկրորդ դեպքում՝ հիմնականում) հինհայերենյան իրողությունները: Համաման դրսևորումներ որպես կանոն հատուկ են շրջակա Կը ճյուղի բարբառներին:

Բայազետի բարբառի բոլոր խոսվածքներում գործառում են 36 բաղաձայններ (*բ, պ, փ, գ, կ, թ, դ, տ, թ, ծ, ժ, ց, ջ, ճ, չ, փ', գ', դ', ծ', ջ', փ, ֆ, գ, ս, ժ, շ, դ, խ, հ', մ, ն, լ, ռ, ռ, յ, կ')*, որոնցից միայն կ' -ն չունի հնչույթային արժեք և կ-ի՝ փոխառյալ բառերում գործառող տարբերակ է: Որոշ խոսվածքներում իբրև հետնալեզվային հասկանների տարբերակներ հանդես են գալիս *գ', կ', ք'* քմայնացած բաղաձայնները: Բաղաձայնական քառաստիճան համակարգով և շնչեղ ձայնեղների, ինչպես նաև ձայնեղ հ' -ի առկայությամբ Բայազետի բարբառը ընդհանրություն է հանդես բերում Արարատյան, Մշո և Դիաղիսի բարբառների հետ:

Բայազետի բարբառն ունի վերջնականկային շեշտ և այդպիսով հարում է արևմտյան բարբառներին: Այդպիսի շեշտ ունեն նաև Խոյ-Մարաղայի, Վանի, Մշո, Դիաղիսի բարբառները: Առանձնակամ է Արարատյանը, որն ունի վերջընթեր շեշտ: Բայազետի բարբառում երկվանկ և բազմվանկ բառերում նկատելի է առաջին վանկի ուժգին արտասանություն: Ընդհանուր հայերենին բնորոշ իր գործառույթների հետ միասին՝ բարբառումս շեշտը առանձին դեպքերում հանդես է գալիս նաև իբրև բայական իմաստների տարբերակման միակ միջոց: Երբեմն քերականական գործառույթ ունի նաև հնչերանգը:

Բարբառի հնչյունական համակարգի համար բնութագրական են նաև արտաբերական օրինաչափություններն ու հնչյունական օրենքները: Բայազետի բարբառում դրսևորվող մի շարք արտաբերական օրինաչափություններ (ինչպես՝ ° ձայնավորի, *n-օ, ե-է* գույգերի դրսևորումները) գալիս են հինհայերենյան շրջանից: Թերևս հնագույն ժամանակներից եկող իրողություն է հինհայերենյան հ-ի դիմաց բոլոր դիրքերում խ-ի գործառություն հնչյունական օրենքը, որ Բայազետի բարբառից բացի՝ դրսևորվում է նաև Վանի, Դիաղիսի, Խոյ-Մարաղայի բարբառներում, Մշո բարբառի որոշ խոսվածքներում: Ուսումնասիրողները, որպես կանոն, *հ-խ* համապատասխանությունը դիտարկել են իբրև հնչյունափոխության արդյունք և այն մեկնաբանել այդ տեսանկյունով: Հարցին անդրադարձող հեղինակները համոզված են, որ հայերենի նախնական *հ* բաղաձայնը պատմական որոշակի ժամանակահատվածում վերոհիշյալ տարածքի խոսվածքներում վերածվել է *խ*-ի: Հետաքրքրական է Ա.Ղարիբյանի, ապա նաև Գ.Ջահուկյանի այն տեսակետը, թե *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը ենթադրության երևույթ է, ուրարտերեն լեզվի ազդեցություն: Մենք ևս հակված ենք ենթադրելու, որ բարբառներում *հ-խ* համապատասխանությունը գալիս է նախագրային հայերենի շրջանից: Հնդեվրոպական նախալեզվից տրոհվելու շրջանում հայերենը չէր կարող ներկայանալ իբրև միասնական հնչյունական և քերա-

կանական համակարգ ունեցող լեզու, այն պետք է որոշակի ընդհանրություններ ունեցող խոսվածքների խումբ լիներ, որոնք այդտի ունենային նաև իրենց յուրահատկությունները: Դրանցից մեկն էլ, կարծում ենք, կարող էր լինել որոշ խոսվածքներում (որոնց հիմքի վրա հետագայում ձևավորվել են Վասպուրականի և Պարսկահայքի բարբառները) *հ*-ի բացակայությունը և դրա դիմաց *խ*-ի գործածությունը: Միաժամանակ, պետք է կարծել, որ Բայազետի, Վանի, Խոյ-Մարադայի, Դիարիկի բարբառներում *հ* բաղաձայն առաջացել է հետագայում՝ իբրև արդյունք ընդհանուր հայերենում կատարված հնչյունափոխական գործընթացների (բառակզբում *յ>հ* անցում, հավելական շնչի առաջացում): Ի դեպ, Բայազետի բարբառում բառամիջի և բառավերջի դիրքերում հետգրաբարյան գրական և օտար փոխառություններում *հ* հնչյուն այդպես էլ չի գործառում: Նշված դիրքերում նախնական *հ*-ի դիմաց ունենք *յ* կամ ոչ ինչ (օրինակ, *ագահ* - *օբայ* / *օբա*, *գոհ* - *գ'օյ*, *դահլ իճ* - *դ'այլ իճ*, *գահլ ա* - *գ'յլ*°, *նախագահ* - *ն'խակա*, *պահեստ* - *պ'եստ*):

Բարբառի արտասանական շղթայի դիտարկումները երևան են հանում բառակզբում հպակն ու հպաշփական բաղաձայնների գուգորդելիություն հետաքրքրական ամանձնահատկություններ: Եթե հինհայերենյան բառաչերտի բառակզբում օրինաչափ են *շնչեղ ձայնեղ+շնչեղ խուլլ*, *շնչեղ խուլլ+շնչեղ խուլլ*, *պարզ խուլլ+պարզ խուլլ*, *պարզ խուլլ+շնչեղ խուլլ* հաջորդականությունները, հնչյունափոխությունների հետևանքով ձևավորվել են *շնչեղ խուլլ+ձայնեղ* (փագ), *պարզ խուլլ+ձայնեղ* (ծըծար) հաջորդականություններ, ապա սակավ դեպքերում են հանդիպում *շնչեղ ձայնեղ+պարզ խուլլ*, *շնչեղ խուլլ+պարզ խուլլ* հաջորդականություններ, իսկ *շնչեղ ձայնեղ+ձայնեղ* հաջորդականությունը բացառված է: Երևան է գալիս բառակզբի դիտարկվող բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման մի օրինաչափություն, ըստ որի՝ որպես կանոն գուգորդելի են լարվածությունամբ նույնական կամ մոտ հնչյուններ, կամ ավելի լարված հնչյուններին հաջորդում են պակաս լարված հնչյուններ, այլ կերպ ասած՝ ավելի սովորական է բառակզբի բաղաձայնական հաջորդականություններում արտասանական լարվածության պահպանումը կամ նվազումը, մինչդեռ լարվածության աճը անսովոր է կամ հազվադեպ: Թերևս այդ օրինաչափությունամբ կարող են բացատրվել ինչպես *շնչեղ ձայնեղ*-ներից հետո *ձայնեղ*ների *շնչեղ* խլացման, այնպես էլ *խուլլ* երից ու *շնչեղ խուլլ* երից հետո *խուլլ* երի *ձայնեղ*ացման գործընթացները (երկու դեպքում էլ տեղի է ունեցել բաղաձայնի անցում ավելի պակաս լարվածության հնչյունի):

Բառակզբի բաղաձայնական հաջորդականությունների ձևավորման համանման իրողություններ, ի դեպ, նկատելի են նաև գրաբարի բառակզբի դիրքում: Բարբառի նոր բառաչերտում հաջորդականությունների ձևավորման սահմանափակումները վերացել են:

Բարբառային խոսքում մեծ տարածում ու բազմազան դրսևորումներ ունեն հնչյունափոխակալան երևույթները, որոնք լինում են երկու կարգի՝ ա) պատմական (կամ կատարված) փոփոխություններ, բ) գործող օրինաչափություններ, որոնք կարող են պայման դառնալ հնչյունափոխությունների՝ բառաթեքման, ածանցման ու բառաբարդման, հնչաշղթայի հարևան միավորների սերտ արտասանության ժամանակ: Պատմական փոփոխությունները կարող են ունենալ և՛ համակարգային, և՛ մասնավոր բնույթ: Համակարգային բնույթ են կրում հնչյունակալան նոր միավորների (օ, հ՛, Ֆ, Կ՛) առաջացումը, երկբարբառների պարզեցումը (առանձնանում է Արարատյան բարբառը՝ իւ>ի, ոյ>ի անցումներով), *ծայնավորների անկումը բազմավանկ բառերի նախաքեշտ վանկերում (հատուկ է նաև Վանի, Մշո, Դիարիսի, Խոյ-Մարաղայի բարբառներին), բառակզբում երկբարբառային ձայնավորից առաջ բաղաձայնական տարրի հավելումը, հավելական շնչի առաջացումը, բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների և հպաքփականների շնչեղ իւ ացումը (յ ուրահատկություններ ունեն Վանի և Խոյ-Մարաղայի բարբառները) և այլն: Մասնավոր բնույթ են կրում ձայնավորական (անկում, տեղաշարժ ըստ արտաբերության բացվածքի՝ նեղացում և լայնացում, շրթնայնացում և ապաշրթնայնացում) և բաղաձայնական (անկում, հավելում, շնչեղացում, ապաշնչեղացում և այլն) զանազան փոփոխություններ, որոնք շրջակա բարբառներում ունեն բազում ընդհանրություններ, և պետք է կարծել, որ լեզվի զարգացման նախորդ փուլերում տեղի ունեցած ընդհանուր գործընթացների արտահայտություններ են. այդ են վկայում նաև միջինհայերենյան միջարք ձևեր:*

Հնչաշղթայի ձևավորման գործող օրինաչափությունները առաջ են բերել և պատճառ են դառնում բաղաձայնների փոխազդեցական բնույթի հնչյունափոխությունների, ինչպիսիք են ձայնեղացումն ու խլացումը, շնչեղացումն ու ապաշնչեղացումը, հպաքփականի շփականացումը (հատուկ է Մշո բարբառին, տարածված է Վանի բարբառում) և շփականի հպաքփականացումը, դրափոխությունը, արտաբերության տեղի փոփոխությունը և այլն:

Շեշտի տեղափոխումը պայմանավորված հնչյունափոխակալան իրողությունները բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ բազմազան դրսևորումներ ունեն, և այս դեպքում որոշակի նշանակություն ունի բառերի միավանկ կամ բազմավանկ լինելու հանգամանքը: Ինչպես Բայազետի, այնպես էլ մյուս բարբառներում շեշտազրկման հետևանքով կանոնավորապես հնչյունափոխվում են *ի և ու ձայնավորները: Բազմավանկ բառերի դեպքում Բայազետի բարբառում շեշտազրկման հետևանքով կարող են հնչյունափոխվել բոլոր ձայնավորներն էլ (բացի ք-ն): Այդպես է և շրջակա բարբառներում, սակայն նկատելի է, որ Վանի և Մշո բարբառներում շեշտազրկման հետևանքով ձայնավորների սղումը*

ավելի ընդգրկուն է, իսկ Արարատյան բարբառում հիմնականում վերաբերում է *հ, ու* ձայնավորներին:

Թե՛ Բայ ազետի և թե՛ շրջակա բարբառներում շեշտափոխական հնչյունափոխությունները գրաբարի և արդի գրական հայերենի համեմատությամբ ավելի բազմազան են և ավելի մոտ են միջինհայերենյան վիճակին: Ընդ որում՝ գործառող հնչյունափոխական օրինաչափությունները որպես կանոն ուղեկցվում են բացառություններով, շեղումներով, որոնք բխում են բարբառային վիճակի եռությունից և ներկայացնում են հինհայերենյան, միջինհայերենյան, նաև աշխարհաբարյան շրջաններին վերաբերող իրողությունների համադրություն: Առանձին դեպքերում բարբառային իրողությունների վերլուծությունները թույլ են տալիս նորովի մեկնաբանել նույն կարգի գրաբարյան երևույթները:

Երրորդ գլխում («Բառագիտական իրողություններ»)

Բայ ազետի բարբառի բառապաշարը դիտարկվում է ըստ տարբեր շերտերի, իմաստային և բառակազմական յուրահատկություններին:

Բայ ազետի բարբառի բառապաշարը ներառում է հայոց լեզվի զարգացման տարբեր փուլեր ներկայացնող բառաշերտեր, տարբեր լեզուներից, գրական հայերենից ու այլ բարբառներից արված փոխառություններ: Անկախ լեզվի զարգացման այս կամ այն փուլի վերաբերության՝ առանձնանում են բարբառային բառերը:

Նպատակահարմար է մինչև 12-րդ դարին վերաբերող կամ հինհայերենյան բառապաշարի ներսում տարբերակել՝ ա) գրաբարի հետ ընդհանուր և բ) գրաբարից տարբեր բառաշերտեր: Յինհայերենյան բառաշերտի հիմնական մասը կազմում են գրաբարի հետ ընդհանուր բառերը: Այս բառաշերտը, ըստ ուսուցման իրողությունների բերած տվյալների, Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում պարունակում է մոտ 1600-ական բառ, Մշո բարբառում՝ մոտ 1850 բառ, Արարատյան բարբառում՝ մոտ 3000 բառ, Դիարդիկի բարբառում՝ մոտ 1700 բառ: Մենք Բայ ազետի բարբառում արձանագրել ենք գրաբարի հետ ընդհանուր 2000-ից ավելի բառեր՝ արմատական բառերից բացի ներառելով նաև բաղադրություններ: Բարբառների՝ գրաբարի հետ ընդհանուր բառաշերտի հիմնական մասը կազմում են ընդհանուր հայերենյան բառերը, որոնք որպես կանոն, վերաբերում են հիմնական բառաֆոնդին: Յինհայերենյան բառաշերտում որոշակի քանակություներ են կազմում նաև գրաբարյան մատենագրության մեջ իրենց գույնը ցուցաբերող, սակայն արդի գրական հայերենում, նաև լեզվի այլ դրսևորումներում ոչ գործածական բառերն ու բառաձևերը (օրինակ՝ անագան – հ'անքան, ատակել – հ'ատրկել, հորդել – խռթել): Գործառում են նաև քարացած քերականական ձևեր (*կըխտակուրուս, ն'խնյաց, տ'նիս, խեռ լըսողաց*): Յինհայերենյան բառաշերտի՝ գրաբարից տարբերվող բառերի մեջ առանձնացվում են բարբառի հնչյունափոխությունն սովորական օրենքներով չբացատրվող՝ գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք ունեցող (տըրըփալ, փոռթիկ, *տող տկ*), գրաբարից տարբեր կազմություններ

ուևեցող բառեր (*օղանօվ, մըքքըլ կեել, գ'եստ, փըրքըվեել, խոնթխընթալ, ճընջուևի*), գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ կամ այդպիսիք ուևեցող բառեր (*լիժ, կ'վառ, կըռկեել, փամփըռնուկ, քըռփըռտուև*) և այլն:

Բայ ազետի բարբառում գործառու մ են միջինհայերենյան բառաչերտի հազարից ավելի բառեր: Դրանց մի մասը բնիկ բառեր են (*ճուռ, հ' առիք, ճըղեել, մըռափ*), զգալի քանակություև են կազմում միջևադարյան մատենագրության մեջ արձանագրված և նորակազմություններ համարվող բառաձևերի գուգահեռները (*օրընխըռնեել, Էրկուև տըկեել, ախըռնտեել, կընհիկ'օրմատ*):

Միջինհայերենյան շրջանում Բայ ազետի բարբառը (ինչպես հայերենև ընդհանրապես) փոխառություևներ է կատարել տարածաշրջանում գործառող այլ լեզուևերից, հատկապես՝ արաբերենից (*ջեբ, խալ ալ, կ'յիմ, ն'ֆ'օս*), պարսկերենից (*թուևռշի, շօռվա, քուֆաթ, փեղալ*), թուրքերենից (*մ'օկ, բ'որիշ, գուլուև, գօգ'լ*): Արաբական փոխառություևներում նկատելի են հնչյուևակաև մի շարք իրողություններ, որոնք բարբառի հնչյուևակաև համակարգում տեղաշարժեր են առաջ բերել. ա) մեծ տարածում ուևի օձայնավորը, բ) արաբերենի ձայնեղևերը բուլոր դիրքերում պահպաևում են իրենց որակը (*դ'վի, խաբար, խարաբ, շ'օբ'թ*), գ) այդ լեզվի *կղաֆ* բաղաձայնի դիմաց բարբառիս բառակզբում հաևդես է գալիս *կ'* կամ *կ* (*կ' /կ'որիք, կ' /կուևբաև*), դ) *ֆ* հնչյուև կարող է դրսևորվել բառի բուլոր դիրքերում (*ֆըլաև, դ'ֆ'աթ'ր, հ'օրիֆ*), ե) արաբերենի բառակզբի *հ-ի* դիմաց որպես կաևոև բարբառս ուևի *հ'* (*հ'ուևքմ, հ'ալև, հ'ալեև*), իսկ բառամիջի *հ-ի* դիմաց՝ *յ* (*ջ'յեել, մ'յլ'օ*): Պարսկերեն փոխառություևներում նկատվում են հիմնակաևում հնչյուևակաև նուևյև իրողությունները: Թուրքերեն փոխառություևներում ևս գործաձակաև է օձայնավորը, աևկաև հպաևկաևևերի ու հպաշ փակաևևերի՝ ըստ ձայնի և աղմուկի համապատասխաևություևն (*բեգ - beg, բիզ - biz, չ'դըր - çadir, մ'օկ - emek, դօշ - döş*), սակայև հաձալևել՝ աևհամապատասխաևություևն (*յուևդ - yurt, կ'լիք - kalip, չ'գուևչ - çekiç, փալլալա - baklava, բեյ - pey, տ'ղլի - dalga, ճիմ - çim*): Թուրքերենի *ğ* հնչյուևի դիմաց բառակզբում ուևեևք *կ*, բառամիջում ու բառավերջում՝ *ղ* (*ğapağ - կ'փաղ, boğa - բուղա, բօղազ - boğaz*), *g*-ի և *k*-ի դիմաց բառակզբում համապատասխաևաբառաևկաև են *գ* (*göl - գօլ, güzel - գօգ'լ*) և *կ* (*karavaş - կ'օրվաշ, kazaև - կ'զաև*), իսկ մյուևս դիրքերում՝ *ղ* կամ *խ* (*kulluk - կուլուևղ, yorgan - յօրղաև, otak - օթաղ, yaka - յալա, dalga - տ'ղլի, baklava - փալլալա*): Թուրքերենի *ö, ü* քմայևացած հնչյուևների դիմաց Բայ ազետի բարբառում գործառու մ են պարզ ձայնավորներ (*göl - գօլ, döş - դօշ, güzel - գօգ'լ, gözlük - գօզլըկ*), բառակզբում *ալ օ, ու* ձայնավորներից առաջ տարածված է *յ*-ի գործածություևնը (*յալուև, յաև, յարա, յօրղաև, յուևրղ*): Արաբապարսկաթուրքական փոխառություևներով բարբառումս ձևավորվել են բազմաթիվ բաղադրություևներ և՛ աձանցմամբ, և՛ բառաբարդմամբ: Շատ բառեր ենթարկվել են իմաստափոխություևն: Թերևս միջինհայերենյան

շրջանին են վերաբերում նաև քրդերենից կատարված փոխառությունները (բ՛լ օբ, բըռ, ճենօթ, ճ՞վիկ):

Բարբառային բառապաշարում էական կշիռ ունի նաև աշխարհաբարյան շերտը: Բայ ազետի բարբառի աշխարհաբարյան բառաշերտի մի մասը թերևս կազմում են բառային այն միավորները, որոնք ներկայացնում են նախորդ փուլերին բնորոշ ձևերին գուգահեռ կամ համասպատասխան այլ ձևեր (ինչպես՝ գրաբ. *ակն դնել*, միյ. *ածել գալք* «ձգտել տիրանալ» - Բ. *հ՞շկ դ՛ընել*, գրաբ. *յալ ալ ցել անել*, միյ. *ալ ալ ցել նել* «աչքից ընկնել» - Բ. *հ՛շկե հ՛ըլ նել*, գրաբ. *ամենայն ոք*, միյ. *ամեն մեկ* «ամեն մեկը» - Բ. *մ՛թ մ՞ռթ*, գրաբ. *առն տալ*, միյ. *ամուսնոյ տալ* «աղջկան ամուսնացնել» - Բ. *մ՞ռթի տալ*, գրաբ. *կարօտանալ*, միյ. *կարօտնալ* «որևէ բանի կարիք գգալ» - Բ. *դ՛էմուդ՛առց հ՛ընգնել*, միյ. *հոգս* «մտահոգություն, մտատանջություն» - Բ. *գ՛ըլ խացավանք*, *մեկ ուրիշ խու մք են կազմում* և լեզվական նոր, աշխարհաբարյան իրողություններ պարունակող բառաձևերը (*հ՛անգաճը կըդդել*, *գ՛ըլ խից դ՛ուս*, *իշի քուռակ*, *խել քից մըտկից դ՛ուս*), շատ բառեր էլ նոր ժամանակներին վերաբերող իրողություններ են ներկայացնում և հետևաբար աշխարհաբարյան կազմություններ են (*գ՛ալ բ՛արի*, *քախլը վորի*, *հ՛ալախանել*, *գուռ-բ՛ախ*, *ծ՞լ օվի*, *իրեքնոց*, *ծ՞խ գալ*, *գ՛ըլ խել* /*զլ խվ* հարվածել գնդակին/, *հ՛ու նքերը քաշել*, *էրկու հ՛արգանէ*, *տընակու*) և այլն:

Աշխարհաբարյան շրջանում Բայ ազետի բարբառը շարունակել է արևելյան լեզուներից բառեր վերցնել, սակայն մեծ քանակի փոխառություններ են կատարվել հատկապես ռուսերենից և սրա միջոցով՝ եվրոպական լեզուներից: Բարբառում ռուսերենից կատարված փոխառությունները քանակը, ըստ մեր հաշվումների, կազմում է մոտ 1300 բառային միավոր: Բարբառով գրի առնված ամենավաղ նյութերում ռուսերեն փոխառյալ բառեր չեն հանդիպում: Կարելի է ենթադրել, որ այդպիսիք մեծ քանակով ի հայտ են եկել նոր հայրենիքում և առավել արար խորհրդային շրջանում: Ռուսերենից կատարված փոխառությունները ևս ենթարկվում են բարբառի հնչյունական օրինաչափություններին, շատ բառեր, վերջում ունենալով *ակամ օ*, էականորեն ընդլայնել են Բայ ազետի բարբառի բառավերջում այդ ձայնավորների գործածությունը: Լինելով զգալի քանակության և ունենալով մեծ գործածականություն՝ ռուսերեն փոխառությունները առավել ապես հետաքրքրություն են ներկայացնում հնչյունաբանական առումով: Բառակազմական առումով մեծ արտադրողականություն չունենալով՝ դրանք յուրահատկություններ են հանդես բերում բայակազմության մեջ, իսկ քերականական առումով լիովին հարմարվել են բարբառի օրինաչափություններին:

Բարբառի բառապաշարը շարունակ համալրվում է գրական լեզվից ներթափանցող բառերով: Մի շարք դեպքերում այդ համալրումը տեղի է ունենում աստիճանաբար դուրս մղվող օտար համարժեքների դիմաց (*թվանք* – *հ՛ըրացան*, *օթաղ* – *սէնյակ*, *կ՞յիլ* – *հ՛ամածայն*, *՛կուշկա* – *լուսամուր*): Այլ դեպքերում բարբառ են

մուտք գործում նոր իրողությունն արտահայտող բառեր (*զատամուն-տիկ, ղուոսակ, ուշուչիչ, մՆկաւմունեզ, յեռախոս*): Բայ ազետի բարբառ բառեր են մուտք գործել նաև շրջակա բարբառներից (օրինակ՝ Մշո բարբառից՝ *վըր՞զ՞ըլ խուլ, վըրվըզի, դ՛ուռ վըր դ՛ըռան*, Վանի կամ Խոյ-Մարտայի բարբառից՝ *կըռու նծ, տըխպել, ճիլ, ճեղ, Արարտյան բարբառից՝ դիփջ օղական, կըփջ ոն, կըփջ իկ, փախճան*): Բայ ազետի բարբառի բառապաշարը ներկայացնող մեր կազմած բառացանկում (առանց գրաբարի հետընդհանուր բառային միավորների) հաշվվում են 6500-ից ավելի բառային միավորներ:

Բարբառային բառապաշարում մեծ հետաքրքրությունն են ներկայացնում բարբառային բառերը: Տարբերակվում են այդ կարգի բառերի երեք խմբեր. ա) բառեր, որոնք հայերենի բարբառներում լայն տարածում ունեն (*ծան, բ՛ըշտել, ճըխտել, շըշկըռել*), բ) Բայ ազետի և այլ, հատկապես մերձավոր բարբառներում գործածական բառեր (*զ՛ըթածուրիկ, ճըլճեխ մէկէսմէկ, զախախորել*), գ) միայն Բայ ազետի բարբառում հանդիպող բառեր (*գըլ որգընդի, կըղզընել, կոտըշխորել, մըխկուտ*):

Բայ ազետի բարբառում ևս բարբառային բառերը արտահայտում են տարբեր ոլորտների (կենցաղ, հարաբերություններ, վիճակ, երկրագործություն, մարմին, հատկանիշներ, շրջակա միջավայր և այլն) վերաբերող իրողու-թյուններ:

Բարբառային բառապաշարը աչքի է ընկնում իմաստաբանական հետաքրքիր շատ իրողություններով, այն միայն հին իրողու-թյունների վերաբերող իմաստային խմբերով չէ, որ հետաքրքրու-թյուն է ներկայացնում: Կենցաղով ու գործունեությամբ չայսմանավորված տարբեր թեմատիկ խմբեր իրենց իմաստային ու բառակազմական յուրահատկություններով նույնպես բնութագրական են բարբառների համար: Օրինակ, Բայ ազետի բարբառի՝ *ժամանակին* առնչվող բառերի քանակը անցնում է հարյուրից: Բարբառում լայնորեն դրսևորվում են բազմիմաստություն (*հ՛ընզնավորել* - 1. սաստիկ վախճնալ, 2. կատաղել. *խըրկել* - 1. վնդել, 2. կնոջից բաժանվել), իմաստափոխության (գրաբ. *հրեղէն* «հրից բաղկացած, հրե, հրի նման» - Բայ ազետի բրբռ. *խըրեղեն* «չնաշխարհիկ»․ գրաբ. *վաստակ* «աշխատություն, հոգևություն, գործ» - Բայ ազետի բրբռ. *վաստակ* «զավակ»․ միյ. *բաժինք* «բաժանված ամբողջի ամեն մի մասը» - Բայ ազետի բրբռ. *բ՛աժինք* «օժիտ»), համանունություն (*մըխել /ծուխ՝ մուխբարձրանալ /- մըխել /մեխխիել / զատ/հեռու /- զատ/ճալ*) ու հոմանիշությունները: Հոմանիշային շարքը որևէ երևույթ կարող է ներկայացնել ամենատարբեր կողմերով, ինչպես՝ *վախենալ* - *կ՞րկըմնել, լալ կել, հ՛ընզնավորել, զախախորել, լիզուլ կըպել, թուքը չօրնալ, գ՛ուլնը թ՛լել, գ՛ուլնը քըցել, հ՛ըլ նել պտի ծեփոն, րուլնը ջ՛ուր դ՛առնալ, ճըժե կըղրել, լեղին կըղրել, լեղին ջ՛ուր դ՛առնալ, մ՞գերը բիզ-բիզ կ՞յնել, վոդները թուլնալ, թեվերը թուլնալ, ս՞կը շըռել, սիռտը դ՛ող հ՛ընզընել, օխն օննել սիռտը, սըռսուկըր դ՛օղալ, օխ*

ուղղորդի մէջ հ'ըլնել: Բարբառային խոսքը հագեցած է դարձվածքներով (օրանա դ'օխժըվոր լմրսկոտ, տուևը բ'առցել օքլօրին /տակնուվրա անել/), եղանակավորող արտահայտություններով (գիղամ գիղաս /սպառնալիք/, էլ իմալ գ'ըլնեօր /հեգնանք/) ու բանաձևային կառույցներով (հ'շկերըս չուռն /ինչ-որ մեկի/ խըմար), առձևներով ու ասացվածքներով (խեր օրեր ես՝ խերկուրուս մի օրա. էրկու շուև կըմվան, ճ'մփոռթի բ'անն օջօղալ): Բայ ազետի բարբառում դրսևորվում են բառաբարդման և ածանցման՝ հայերենին հատուկ եղանակները՝ որոշյուրահատկություններով:

Չորրորդ գլխում («Բայ ազետի բարբառի ձևաբանական առանձնահատկությունները՝ շրջակա բարբառների համեմատությամբ») բարբառի անվանական ու բայական համակարգերը վերլուծության են ենթարկվում ձևավորման պատմական ընթացքի և շրջակա բարբառային համակարգերի հետ փոխարարություններին ու ազդեցություններին դիտարկումով: Չթեքվող խոսքի մասերը հետաքրքրություն են ներկայացնում իմաստագործառական մի շարքյուրահատկություններով:

Բայ ազետի բարբառում հոգևակերտ մասնիկները ունեն գործառական տարբեր բաշխում և միանում են տարբեր հիմքերի: Ընդհանրական բնույթ ունեցող եր, ներ հոգևակերտները, գտնվելով լրացուցիչ բաշխման հարարություն մեջ, որպես կանոն միմյանց փոխարինել չեն կարող, սակայն կարող են փոխարինել այլ հոգևակերտների: Նկատելի է նաև սրանց գործառական ոլորտների ընդլայնման միտում, սակայն միշտ է, որ եր կամ ներ հոգևակերտները կարող են մյուսներին համարժեք լինել իմաստային առումով: Սահմանափակ տարածում ունեցող հոգևակերտների գործածությունը պայմանավորված է բառերի ձևային (ք), իմաստային (րանք, տանք /տիք, անք, ոնք, ենք), նախնական ձևաբանական (վանք) հատկանիշներով, իսկ սակավ հանդիպող անք (ձ'իյանք), իք (մ'ռթիք), անիք (կընանիք), էրք (տղդերք), ստանք (գ'էտըստանք) թեքույթներից առաջին երեքը գործածվում են ավանդույթամբ, վերջին երկուսը՝ հարևան բարբառների ազդեցությամբ:

Եթե Բայ ազետի բարբառի բոլոր հոգևակերտներն ունեն իրենց գուգահեռները շրջակա բարբառներում, ապա վերջիններումս կան հոգևակերտներ, որոնք Բայ ազետի բարբառում չկան:

Բայ ազետի բարբառը, ինչպես և խոյ-Մարտային ու Կը ճյուղի բարբառները, ներգոյական հոլով չունի: Դիտարկվող բոլոր բարբառներում սեռականը և տրականը տարբերվում են որոշիչ հոդի գործածությամբ, Մշո բարբառից բացի՝ մյուս բարբառներում հայցական հոլովը իրի առման դեպքում նման է ուղղականին, իսկ անձի առման դեպքում՝ տրականին: Բայ ազետի բարբառում սովորական են բացառականի ց-ով ձևերը, բայց գործածվում են նաև է-ով ձևեր: Այդպես է և Վանի, Դիադինի, Մշո բարբառներում: Արարտյան բարբառից բացի՝ մյուս

բարբառներում հատուկ տեղանունների բացառականը ունենում է ավերջավորություն: Այսպիսով, Բայազետի բարբառը, Վանի և Դիադիսի բարբառների հետ, սեռական, տրական, հայցական հոլովների ձևավորման առումով նմանվում է արևելյան բարբառներին, իսկ բացառականի ձևավորման յուրահատկություններով և ներգոյական հոլովի բացակայությամբ հարում է հարևան արևմտյան բարբառներին:

Բայազետի և Արարատյան, իսկ – Մարաղայի, Վանի բարբառներում գոյականների մեծ մասը ենթարկվում է Ի հոլովման (Վանի բարբառի դեպքում՝ միայն եզակի թվում): Ու հոլովումը իր ընդգրկմամբ երկրորդն է Բայազետի, Վանի, Արարատյան, իսկ – Մարաղայի բարբառներում և ամենատարածվածն է Մշո, Դիադիսի բարբառներում: Բայազետի և Արարատյան բարբառներում Ու հոլովումն ունի ձևային (*ի* հնչյունով ավարտվող բառեր) և ձևախմբատային (անորոշ դերբայ) հիմքեր, մյուս բարբառներում այս հոլովման ենթարկվում են նաև իմաստային խումբ կազմող (կենդանիների անուններ) և որևէ հատկանիշով չխմբավորվող բառեր, իսկ Մշո և Դիադիսի բարբառներում հոգնակի թվում Ու հոլովումն ունի ընդհանրական բնույթ: Բայազետի, Արարատյան, Մշո, Դիադիսի բարբառներում Վա հոլովման բառերը սեռականում ունենում են *վա* վերջավորություն, Վանի և իսկ – Մարաղայի բարբառներում՝ *վան* կամ *վա*: Այս հոլովման բառերի՝ բացառականի է վերջավորությամբ ձևերը Բայազետի բարբառում ավելի սովորական են (*հ' առավորնէ, կէսօրնէ*): Այդպիսով բարբառս, պահպանելով Վա հոլովման բառերի բացառականի՝ միջինհայերենյան ակունքներ ունեցող *է*-ով ձևերը, մերձենում է արևմտյան և իսկ – Մարաղայի բարբառներին ու տարբերվում Արարատյան բարբառից: Ի տարբերություն մյուս բարբառների՝ Ան հոլովման ենթարկվող բառերի թիվը խիստ սահմանափակ է Բայազետի և Արարատյան բարբառներում: Սրանցում Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ մյուս բարբառների սակավաթիվ այլ բառերի դիմաց: Բոլոր բարբառներում Յ հոլովումն ունի ձևախմբատային հիմք: Ա արտաքին հոլովումը կանոնավորապես դրսևորվում է հիմնականում Բայազետի և Մշո բարբառներում: Բայազետի բարբառում այս հոլովման ենթարկվում են հատուկ տեղանունները և մեկ-երկու հասարակ անուններ, Մշո բարբառում՝ նաև անձնանուններ, որոշ հասարակ անուններ: Սեռական-տրականում ա հոլովիչ են ունենում Բայազետի բարբառի մի քանի բառեր ևս, ինչպես նաև Մարաղայի խոսվածքի՝ իկ - ով վերջացող բոլոր բառերը: Մյուս բարբառներում առկա են Ա վերջադրական հոլովման արտահայտության մասնավոր դեպքեր: Ընդհանրապես, դիտարկվող բարբառներում եզակի սեռական-տրականի ձևով նույնացել են նախնական Ա ներքին և Ա արտաքին հոլովումների արձագանքները ներկայացնող բառախմբեր, ընդ որում՝ միշտ բարբառի հասարակ, որոշ դեպքերում նաև՝ հատուկ անունների՝ բարբառներում Ա արտաքին հոլովման ենթարկվելը արձագանքն է հինհայերենյան Ա ներդրական հոլովման, իսկ հատուկ տեղանուն-

ների նման հոլովումը արձագանքն է հինհայերենյան Ա վերջադրական հոլովման: Նկատելի է, որ հատուկ տեղանունների հոլովակն յուրահատկություններով հինհայերենյան համակարգին ավելի մոտ են Բայագետի և Մշո բարբառները, քան մյուս բարբառները:

Որոշյալ ության կարգի դրսևորման առումով բարբառները յուրահատկություններ են հանդես բերում ըստ արտահայտության միջոցների ու եղանակների և ըստ ընդգրկման: Ըստ այդմ՝ ը և Ն որոշիչ հոդերի գործածությամբ բնութագրվում են Բայագետի, Մշո, Արարայտյան և Խոյ-Մարաղայի բարբառները, միայն Ն որոշիչ հոդ ունեն Վանի, Դիադինի բարբառները և Ալաշկերտի խոսվածքը: Սեռականից բացի՝ բոլոր հոլովներում որոշիչ հոդի կիրառությամբ բնութագրվում են Արարայտյան և Խոյ-Մարաղայի բարբառները: Բոլոր բարբառներում անորոշ հոդը ունի նախադաս կիրառություն, Վանի բարբառում և Ալաշկերտի խոսվածքում՝ նաև հետադաս կիրառություն: Բայագետի և Վանի բարբառներում երբեմն հանդիպող կրկնակի հոդառությունը ընդհանուր առմամբ բնութագրական է այդ բարբառների համար, թերևս երկուսում էլ մարող հատկանիշ է: Ստացականությունը բոլոր բարբառներում էլ դրսևորվում է *ս, տ, ն (ը)* հոդերով, որոնք կարող են դրվել բոլոր հոլովների վրա: Բայագետի բարբառում հոգնակի ստացականություն արտահայտելու համար թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերը ստացական հոդից առաջ ստանում են *ներ* հոգնակերտը: Բարբառներում գործածվող դիմորոշ հոդերն են *ս* և *տ*, որոնք կարող են դրվել անձնանիշ գոյականների կամ իբրև այդպիսիք գործածվող այլ բառերի բոլոր հոլովակնանիքների վրա: Սակավ *են ս* հոդի՝ ցուցական իմաստով կիրառությունն դեպքերը:

Բոլոր բարբառներում որակական ածականը քերականորեն բնորոշվում է համեմատության աստիճաններով, որոնք դրսևորվում են շարահյուսական միջոցներով, վերլուծական, նկարագրական եղանակներով, ածանցմամբ, բառաբարդմամբ, նաև՝ հնչերանգով: Դիտարկվող բարբառները թվականների դրսևորման էական զանազանություններ հանդես էն բերում:

Յառաջ համակարգային բնույթ ունեն և բարբառների միջև համեմատություններ անցկացնելու առումով լեզվական զգալի նյութ են պարունակում դերանունների ձևաբանական յուրահատկությունները: Այսպես, անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի տրական հոլովի ձևերը գրաբարատիպ են Արարայտյան բարբառում (*ինձ, քեզ, մեզ, ձ'եզ*), մինչդեռ Բայագետի և մյուս բարբառներում այդ ձևերն ունեն ի կամ իկ հավելված (*ընձի, մեզի, քեզի, ձ'եզի, մեզիկ, ձ'եզիկ*), Բայագետի և Վանի բարբառներում՝ նաև առանց *զ*-ի ձևեր (*քե, մե, ձե*): Միայն պարզ կազմության ցուցական դերանուններ ունի Արարայտյան բարբառը (*էս, էտ, էն*), միայն հավելվածավոր կազմության դերանուններ ունի Մշո բարբառը (*իդա, ինա, ըդի, ընի*), և՛ պարզ, և՛ հավելվածավոր կազմության դերանուններ ունեն Բայագետի (*էս, էսի, էսա, էսիկ, էսակ*), Վանի (*էս, էսա, էսիկ*), Խոյ-Մարաղայի (*էտ, էտիկ'*) և Դիադինի

(Էս, Էսի, Էսան) բարբառները: Բայ ազետի բարբառում ցուցական դերանունները ենթարկվում են Ու անվանական հոլովման, մինչդեռ մյուս բոլոր բարբառներում այդ դերանունները ենթարկվում են դերանվանական հոլովման՝ եզակի սեռականի ձևերում ունենալով *ր*: Ցուցական դերանունների եզակի սեռականում կարևոր հատկանիշ է *տ*-ի հավելումը, որ առավել արար հատուկ է արևելյան բարբառներին, իսկ արևմտյաններից դրսևորվում է Դիադինի և Մշո բարբառներում: Այս հավելման վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Մենք համամիտ չենք Ա.Ղարիբյանի այն տեսակետին, թե գործընթացը տեղի է ունեցել *Էս + դորա > Էսդոր > Էստուր - քստուր > Էստու* ճանապարհով: Ինչ խոսք, ընդունելի է Յ.Աճառյանի տեսակետը տի՝ հնչյունական հավելում լինելու վերաբերյալ: Սակայն անհամոզիչ է թվում այն պնդումը, թե այդ ներմուծումը սկիզբ է առել նրակամ *այ նր* ձևերից և ապա տարածվել նաև մյուս ձևերում: Երևույթի դիտարկումը Բայ ազետի բարբառում մեզ թույլ է տալիս ենթադրել, որ *Էսի* և *Էնի* դերանունների *քստու* և *ընդու* սեռականներում առաջնալեզվային հավելման հնչյունի առկայությունը հետևանք է *Էտի* դերանվան *քտու* սեռականի համաբանական ազդեցության, որին մեծապես նպաստել է այն հանգամանքը, որ բարբառումս, ինչպես նաև հայերենի շատ դրսևորումներում, բառակազմի *ք* ձայնավորին մեկ բառաձայն հաջորդել չի կարող (հիշատակված *քտու* ձևը թերևս հնարավոր է դարձել տիպականի՝ տնական արտասանության հնարավորություն ունենալու շնորհիվ), ուստի անընդունելի են *ը-սու*, *ը-նու* ձևերը: Ստացական դերանունները Բայ ազետի բարբառումս անձնական դերանունների սեռական հոլովածներն են, որ հողի միջոցով ձևավորվում են իբրև սկզբնաձևեր, ձեռք բերում ինքնուրույն իմաստ ու գործածություն և հոլովվում՝ եզակի թվում Ու հոլովմամբ, հոգնակի թվում՝ Ց հոլովմամբ: Շրջակա բոլոր բարբառներում, ի տարբերություն Բայ ազետի բարբառի, ստացական դերանունները ունեն նաև հավելյալ մասնիկներով կազմվածություններ: Դերանվան մյուս տեսակները ևս Բայ ազետի և շրջակա բարբառներում հանդես են բերում ինչպես բառաձևերի, այնպես էլ քերականական հատկանիշների գնահատության ունեն:

Բայ ազետի բարբառը Էական առանձնահատկությունների ունի բայական համակարգում: Բայի կազմության առումով այստեղ և՛ է, և՛ Ա խոնարհումների բայերում հիսհայերենյան *ան* ածանցի դիմաց հանդես է գալիս *ն* ածանց, և այդ բայերի կազմությանը շարունակում է տարբերակվել միայն լծորդությամբ, ու ըստ այդմ էլ խոնարհման համակարգում բայերը հանդես են բերում յուրահատկություններ: Այդպես է և Մշո, Դիադինի, հիմնականում նաև Վանի բարբառներում, մինչդեռ Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառներում Ա խոնարհման բայերում գործածվում է *ան* ածանց: Բայ ազետի բարբառում բացակայում է չբայ ածանցը, կենսունակ է Ա խոնարհման բայեր ձևավորող *ն*-ն: Շրջակա բարբառային միավորներում միայն Արարատյանի որոշ խոսվածքներ ունեն չ

ածանց: Կրավորական *վ* ածանցը Բայ ազետի բարբառում ներգործական սեռի բայերը վերածում է առավել արար չեզոք սեռի, ընդ որում՝ շատ բայեր այդ ածանցը կա՛մ ընդհանրապես չեն ընդունում, կա՛մ հազվադեպ են ընդունում: Բայ ազետի և Արարայան բարբառներն ունեն պատճառական *ցըն* ածանց, մյուսները՝ *ցուց* և *ուց*: Բայը է և Ա խոնարհումներ ունի Բայ ազետի, Արարայան, Խոյ-Մարաղայի և Վանի բարբառներում, Դիարխի բարբառում՝ նաև Ու: Մշո բարբառում դիտարկվել են *ա, ե, ի, ու* խոնարհիչներ: Անցյալի րեական հիմք ունենալու իրենց հատկանիշով Բայ ազետի և Արարայան բարբառները տարբերվում են մյուսներից: Բայ ազետի բարբառում բայի սեռը կարող է պայմանավորված լինել բայիմաստով, դրսևորվել ածանցամբ, բայական համապատասխան վերջավորություներով, շարահյուսական միջոցներով: Այստեղ պահպանվել են հինհայերենյան շրջանից եկող ներգործած և կրավորած և խոնարհումները (անցյալ կատարյալ ժամանակահատվածում, ըղծական, ենթադրական, հարկադրական ապառնիների եզակի երրորդ դեմքերում, եզակի հրամայականում), որոնց դրսևորումը պայմանավորված է՝ ա) բայի կազմությամբ (*Ն, ԷՆ* և *վ* ածանցներ ունեցող բայերը խոնարհվում են կրավորած և, իսկ *ցըն* ածանց ունեցողները՝ ներգործած և), բ) լծորդությամբ (Ա խոնարհման պարզ բայերը խոնարհվում են ներգործած և, իսկ Ե խոնարհման նույն կարգի /նաև բազմապատկական ածանց ունեցող/բայերը կարող են խոնարհվել ներգործած և կրավորած և), գ) բայի սեռով (Ե խոնարհման պարզ, ինչպես նաև բազմապատկական ածանց ունեցող ներգործական սեռի բայերը խոնարհվում են ներգործած և, իսկ նույն կարգի չեզոք բայերը որպես կանոն խոնարհվում են կրավորած և), դ) բայիմաստով (Ե խոնարհման պարզ, ինչպես նաև բազմապատկական ածանց ունեցող՝ վիճակ և դրուծություն ցույց տվող բայերը խոնարհվում են կրավորած և, իսկ նույն կարգի՝ վիճակ և դրուծություն ցույց չտվող, նաև բնութայան երևույթներ ներկայացնող միադիմի բայերը խոնարհվում են ներգործած և): Բայ ազետի բարբառում կան բայեր, որոնք համապատասխան ժամանակահատվածներում կարող են խոնարհվել և՛ ներգործած և, և՛ կրավորած և, իսկ այլ դեպքերում նույն ձևով կարող են արտահայտել ինչպես ներգործականության, այնպես էլ չեզոքության կամ կրավորականության իմաստներ: Ներգործած և կրավորած և խոնարհումների տարբերակումը իր դրսևորումներն ունի նաև շրջակա Դիարխի, Մշո, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում:

Բայ ազետի բարբառում բայն ունի 7 դերբայ՝ անորոշ, հարակատար, ենթակայական, անկատար, վաղակատար, ժխտական և ձևի: Դիտարկվող բոլոր բարբառներում անորոշ դերբայն ունի *ել / էլ, ալ* վերջավորություներ և եզակի թվում ենթարկվում է Ու հոլովման: Յարակատար դերբայը Բայ ազետի բարբառում բոլոր դեպքերում ունի *ուկ* վերջավորություն, վաղակատարը՝ Եր/եր վերջավորություն: Արարայան բարբառից բացի՝ շրջակա բոլոր

բարբառներն ու նեն *ուկ* մասնիկով հարակատար (հաճախ ած-ով ձևին գուգահեռ): Անկատար դերբայը Բայագետի բարբառում ունի *ուկ* վերջավորություն, որը *գ'ալ, լ'լ, տալ* բայերի դեպքում ավելանում է անորոշի վրա՝ *գ'ալ ուկ, լ'լ ուկ, տրլ ուկ*: Այս դերբայական ձևն ունի նաև Արարատյան բարբառը՝ *ըմ, ում* վերջավորություններով: Լիովին ընդունելի համարելով անկատարի առաջացման վերաբերյալ հայագիտության մեջ տարածված տեսակետը՝ կարծում ենք, որ ներգոյական հոլով չունեցող Բայագետի բարբառում այդ դերբայի ձևավորումը արդյունք է ոչ թե համակարգի ինքնուրույն զարգացման, այլ Արարատյան բարբառի ազդեցության: Այս դերբայի գործառնությունը բարբառումս թերևս պետք է սկսված լինի Արարատյան բարբառում դրա ամբողջական ձևավորվածության ու կիրառության պայմաններում, Արարատյանի հետ շփումները ավելի սերտ դառնալու պարագայում և սահմանական ներկայի՝ այդ բարբառին բնորոշ ձևը կիրառելու շնորհիվ, հավանաբար 18-րդ դարում: Թվում է՝ Բայագետի բարբառում ենթադրական եղանակի ժխտական ձևերը իրականում կազմվում են հաստատականի ձևերից (և ոչ թե անորոշ դերբայից՝ *լ*-ի անկումով)՝ հնչյունափոխական որոշ գործընթացներով, այսինքն՝ ժխտական դերբայի կազմավորումը բարբառումս կարող է ունենալ տարբեր մեկնաբանություն: Ձևի կամ ընթացակցական դերբայը Բայագետի բարբառում ձևավորվում է *էն* կամ *ուն* մասնիկներով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վրա: *Եմ* բայի *ա* ձևը բարբառումս ներքին զարգացման արդյունք է և առնչվում է ըզձական ապառնու և հրամայականի, ինչպես նաև հինհայերենյան եզակի հրամայականի համապատասխան ձևերին: Եղանակաձևականային ձևերը Բայագետի բարբառում կազմավորվում են հիմնականում գրական արևելահայերենին բնորոշ եղանակներով:

Ապակատար դերբայի բացակայության պատճառով սահմանականի ապառնու իմաստն արտահայտվում է ենթադրական ու հարկադրական եղանակների ձևերով: Սահմանական եղանակի վարկատար ներկայի հոգնակի երրորդ դեմքի ձևում (քընած/քընած ա) ակնհայտորեն դրսևորվում է Ալազկետի խոսվածքի ազդեցությունը: Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալը կարող են կազմել *և՛* ներկայի, *և՛* անցյալի հիմքերից (այդպես է նաև Մշո և Դիադինի բարբառներում): Պատմական ներկայի իմաստը բարբառումս շատ հաճախ արտահայտվում է ենթադրական ապառնու ձևերով, որը գուցե կարող է վկայել Բայագետի բարբառի՝ նախկինում Կը ճյուղին պատկանելու մասին: Յարկադրականի ձևերը բարբառումս կազմվում են *պը տի* եղանակի չով: Բայերի անկանոնությունները պայմանավորված են գանազան գործոններով, որոնցից են միավանկությունը, լեզվի զարգացման նախորդ փուլերից ձևերի, նաև անկանոնությունների ժառանգումը, նույնիմաստ բայերի միաձուլումը, այլ բայերի համաբանական ազդեցությունը, ներկայի և անցյալի հիմքերի հնչյունափոխական անհամա-

պատասխանությունը և այլն: Նույն կարգի շեղումներ դիտարկվել են նաև շրջակա բարբառներում:

Յինգերոդ գլխում («Բայ ազետի և ամնչակից բարբառների գուգաբանական վիճակագրական քննություն») վեր է հանվում Բայ ազետի և շրջակա բարբառների փոխարարությունների վիճակագրական պատկերը՝ ըստ հնչյունաբերականական 100 գուգաբանությունների (տվյալների մեջ մեր կատարած որոշ շտկումներով), բառավիճակագրական քննությամբ ներկայացվում են բառային հիմնական տարբերություններն ու ընդհանրությունները:

Բազմահատկանիշ դասակարգման 100 հատկանիշների շրջանակում Բայ ազետի բարբառը բնութագրվում է 37,5 (10,5՝ բաղաձայնական, 8,5՝ ձայնավորական, 9,5՝ անվանական, 9,0՝ բայական) միավոր հատկանիշներով: Բոլոր բարբառներում էլ ամբողջական հատկանիշների բարձր ցուցիչները վկայում են կայուն գործառույթ, բարբառային միասնական համակարգերի մասին:

Ըստ ձայնավորական հատկանիշների՝ Բայ ազետի բարբառն ամենաբիչ տարբերություններն ունի Դիադիևի և Մշո բարբառներից (3,5 միավոր), ամենաատ տարբերություններ՝ Արարատյան բարբառից (9,5 միավոր): Ըստ բաղաձայնական հատկանիշների՝ Բայ ազետի և Դիադիևի բարբառների տարբերությունների ցուցիչը ամենափոքրն է (3 միավոր): Ամենաատ տարբերություններ հանդես է բերում Վանի բարբառը (9 միավոր): Յնչյունական հատկանիշներով Բայ ազետի բարբառին, այսպիսով, ամենամոտը Դիադիևի բարբառն է՝ 6,5 միավոր տարբերություններով, իսկ ամենաատ տարբերություններն ունի Արարատյան բարբառը (18 միավոր): Բայ ազետի և շրջակա բոլոր բարբառները ունեն հնչյունական 7 ընդհանուր հատկանիշներ, իսկ 50 հնչյունական հատկանիշներից 12-ը որևէ բարբառում չի դրսևորվում: Միայն Բայ ազետի բարբառին հատուկ է մեկ հատկանիշ՝ շրթնայնացած ափամկայություն:

Ըստ անվանական հատկանիշների՝ Բայ ազետի և Դիադիևի բարբառների տարբերությունների ցուցիչը ամենափոքրն է (3 միավոր): Քիչ տարբերություններ են հանդես բերում նաև Արարատյան (4,5 միավոր) և Խոյ-Մարաղայի (5,5 միավոր) բարբառները: Բայ ազետի բարբառից անվանական հատկանիշներով ամենաատ տարբերություններ ունեն Մշո և Վանի բարբառները (10,5-ական միավոր): Բայական հատկանիշների առումով ևս Բայ ազետի բարբառն ամենաբիչ տարբերություններ ունի Դիադիևի բարբառից (5,0 միավոր): Արարատյան բարբառից ունեցած տարբերությունները կազմում են 6 միավոր, Վանի բարբառից ունեցած տարբերությունները՝ 6,5 միավոր: Բայական հատկանիշներով ամենաատ տարբերություններ հանդես է բերում Խոյ-Մարաղայի բարբառը (9,5 միավոր): Այսպիսով, ըստ բերականական հատկանիշների՝ շրջակա բարբառներից Բայ ազետի բարբառն ունի տարբերությունների հետևյալ ցուցիչները. Դիադիևի բարբառ՝ 8, Արարատյան բարբառ՝ 10,5, Խոյ-Մարաղայի բարբառ՝ 15, Վանի

բարբառ՝ 17, Մշո բարբառ՝ 19: Բայ ազետի և շրջակա բոլոր բարբառները ունեն քերականական 3 ընդհանուր հատկանիշներ, իսկ քերականական հատկանիշներից 11-ը բարբառներում տարածում չունեն:

Շրջակա բարբառներից Բայ ազետի բարբառին առավել մերձավոր է Դիադիևի բարբառը՝ տարբերությունների 14,5 ցուցիչով, սակայն այս երկու միավորները նույն բարբառի մեջ ընդգրկվել չեն կարող, քանի որ իրականում տարբերվում են հատկանիշների ավելի մեծ քանակությամբ⁹: Մյուս բարբառները գտնվում են մոտավորապես հավասար հեռավորության վրա՝ տարբերությունների 28,5-ից 30,5 ցուցիչներով: Յաջորդաբար Բայ ազետի բարբառին ավելի մոտ է Արարատյան բարբառը՝ տարբերությունների 28,5 ցուցիչով: Ըստ 5-րդ դարում հնարավոր համարված հնչյունաքերականական գուգաբանության ներքին՝ Բայ ազետի բարբառին ամենամոտը Դիադիևի և Խոյ-Մարաղայի բարբառներն են, իսկ տարբերությունների ամենամեծ ցուցիչն ունի Արարատյան բարբառը: Բայ ազետի բարբառը գուգակցում է արևելյան և արևմտյան բարբառային միավորներին բնորոշ հատկանիշներ և զարգացումներ: Բարբառի՝ առավել արարական մտայն կամ արևելյան բարբառներին հատուկ հատկանիշների մեջ արևմտյան բարբառներին բնորոշ իրողությունները քանակով էականորեն գերազանցում են արևելյաններին բնորոշ իրողություններին: Ուշագրավ է հատկապես հնչյունական հատկանիշների առումով Բայ ազետի բարբառի գգալի մերձավորությունը արևմտյան բարբառներին:

Բարբառների փոխարարությունները պարզելու համար դիտարկել ենք նաև բառային գուգաբանությունների դրսևորումները: Օգտագործելով Գ.Ջահուկյանի կազմած 100 միավոր ընդգրկող ցուցակը, բառական միավորների գնահատման սկզբունքները և հետևելով նրա օրինակին¹⁰, որոշել ենք Բայ ազետի բարբառի և շրջակա բարբառների բառային հիմնական տարբերությունները: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ բառային 100 գուգաբանությունների շրջանակում Բայ ազետի բարբառին առավել մերձավոր է Դիադիևի բարբառը՝ տարբերությունների ընդամենը 1 միավոր ցուցիչով: Ըստ Բայ ազետի բարբառից ունեցած բառապաշարային տարբերությունների՝ հաջորդում են Վանի (10 միավոր) և Խոյ-Մարաղայի (10,5 միավոր) բարբառները: Տարբերությունների ավելի բարձր ցուցիչներ են հանդես բերում Մշո (12,5 միավոր) և Արարատյան (13 միավոր) բարբառները: Բառավիճակագրության մեթոդը կիրառել ենք նաև բարբառային միավորների ընդհանրությունները վեր հանելու

⁹ Տե՛ս Վ.Կատվայան, Բայ ազետի և Դիադիևի բարբառների փոխարարությունները, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2012, էջ 115-129:

¹⁰ Տե՛ս Գ.Ջահուկյան, Յայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 147-154:

համար՝ ընդգրկելով բարբառային և եզրվի ներորոշ բառային ավելի մեծ քանակի գուգաբանություններ: Այդ նպատակով Բայազետի և շրջակա բարբառների բառապաշարների առնչությունները դիտարկել ենք ըստ Յայերենի բարբառագիտական առկա հայերի հավաքման ծրագրում ներկայացված հասկացական-բառանվանողական 478 գուգաբանությունների¹¹, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է որևէ հասկացություն և դրա արտահայտության հնարավոր տարբերակները բարբառային հայերենում: Ըստ այդմ՝ Բայազետի և շրջակա բարբառների ընդհանրությունները ունեն քանակական հետևյալ արտահայտությունը. Դիադինի բարբառի հետ՝ մոտավորապես 450 բառ, Վանի բարբառի հետ՝ մոտավորապես 360 բառ, Մշո բարբառի հետ՝ մոտավորապես 350 բառ, Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառների հետ՝ մոտավորապես 330-ական բառ: Միայն Բայազետի և Դիադինի բարբառներում արձանագրված բառերը ևս քանակով ամենաշատն են՝ հինգ տասնյակից ավելի: Մոտավորապես այդքան են նաև միայն Բայազետի և Վանի բարբառներում արձանագրված բառերը: Այլ բարբառների դեպքում ընդհանրությունների քանակը կազմում է մոտավորապես երեք տասնյակ: Ընդհանրապես, Բայազետի բարբառը բառապաշարի առումով ևս ավելի սերտ առնչություններ ունի արևմտյան կամ Կըճյուղի Դիադինի, Վանի, Մշո բարբառների հետ, որն արտահայտվում է գործածական բառաշարի ավելի մեծ ընդհանրությունամբ, հիմնականում հայերենի արևմտյան տարբերակներին բնորոշ բառային միավորների գալի քանակությամբ: Այդպիսով, Բայազետի բարբառը Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում ընդգրկելու հանգամանքը դառնում է վիճահարույց:

ԵՃՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բայազետի բարբառի հնչյունաքերականական ու բառապաշարային համակարգերի, դրանց արդի վիճակի ձևավորման պատմական ընթացքի, շրջակա բարբառների համակարգերի հետ առնչությունների հետազոտությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները:

1. Պատմական հանգամանքների բերումով Բայազետի բարբառը 20-րդ դարի սկզբներին դադարել է գործառել իր բնօրրանում՝ Բայազետ քաղաքում և համանուն գավառում: 19-րդ դարի առաջին կեսին ներկայիս Գավառ քաղաքում ու շրջակա մեկ տասնյակից ավելի բնակավայրերում հաստատված բայազետցիները անխաթար պահպանել և սերունդներին են փոխանցել մայրենի խոսվածքը: Բայազետցիների սերունդների առավելապես միատարր

¹¹ Տե՛ս Յայերենի բարբառագիտական առկա հայերի հավաքման ծրագիր, Ե., 1977, էջ 25-71:

միջավայրում բարբառը շարունակում է իր բնական գործածությունը և ներկայանում է իբրև բարբառային հայերենի ինքնատիպ և կայուն մի դրսևորում:

2. Բայագետի բարբառը բնութագրվում է հնչյունաքերականակն ու բառապաշարային գուգածուկությունների առատությամբ: Խոսքի որոշակի տարբերակվածությունն է արտահայտվում ըստ սեռերի և տարիքային խմբերի: Բարբառը դրսևորման յուրահատկություններ է հանդես բերում տարածական բոլոր տարբերակներում: Իրենց ընդհանրություններով խոսվածքները կազմում են խմբեր, և այդ խմբավորումը պայմանավորված է բարբառակիրների ծագումով:

3. Բարբառի հնչյունական համակարգի հիմքը կազմում են ընդհանուր հայերենյան հնչյունները, հնչյունաքանական ու հնչունյաքանական օրինաչափություններն ու իրողությունները: Բայագետի բարբառի համար բնութագրական են առանձին հնչյունների արտաբերական յուրահատկությունները, երկբարբառային, քմային ու շրթնայնացած ձայնավորների առկայությունը, քառաստիճան բաղաձայնական համակարգը, հնչյունների կապակցման և հնչաշղթայի ձևավորման որոշ առանձնահատկություններ:

Բարբառի ինը ձայնավոր հնչյունները ներկայացնում են նույնքան հնչունյթներ, առկա է նաև գերհնչունյթ (%n): Բոլոր խոսվածքների համար ընդհանուր 36 բաղաձայն հնչյունները ներկայացնում են 35 հնչունյթներ: Շեշտը վերջնական կային է, սակայն բազմական բառերի առաջին վանկին ևս բնորոշ է ուժգին արտասանություն, որը երբեմն ունենում է քերականական իմաստների տարբերական դեր: Շեշտի հետ կապված հնչյունափոխությունները համակարգային հստակ պատկեր չեն ներկայացնում, սակայն նկատելի է որոշակի պայմանավորվածություն ըստ բառերի վանկաքանակի: Բարբառում օրինաչափ բնույթ են կրում փոխադրեցական հնչյունափոխական մի շարք իրողություններ (բաղաձայնների ձայնեղացում, խլացում, ապառնչեղացում, շնչեղացում, հպառփականների շփականացում, շփականների հպառփականացում, դրափոխություն և այլն): Յնչյունական և հնչյունափոխական մի շարք իրողություններ ունեն տարբեր դրսևորումներ բառապաշարի պատմական տարբեր շերտերում:

4. Բայագետի բարբառի հնչյունական համակարգի պատմական փոփոխությունները հիմնականում ներկայացնում են ընդհանուր-հայերենյան գործընթացներ (մենաբարբառացում, հնչյունական նոր միավորների առաջացում, հնչյունների համակարգային անկում և հավելում, այլ կարգի փոփոխություններ)՝ արտահայտության որոշակի յուրահատկություններով: Միաժամանակ, բարբառը բնութագրվում է լեզվի պատմության նախորդ փուլերին բնորոշ հնչյունական շատ իրողություններով: 5-րդ դարի բարբառային հայերենի համար բնութագրական համարված հիմնական գուգաբանություններից Բայագետի բարբառին բնորոշ են բառակազմում

շնչեղ ձայնեղների գործածությունը, *ւ*-ին հաջորդող խուլ հայկականների և հապշ փականների ձայնեղությունը, *հ*-ի դիմաց ոչ ամսմանական *խ*-ի գործածությունը, *ա*-ի շրթնայնացման երևույթի օրինակապի դրսևորումը, *ե*-ի և *ո*-ի երկբարբառային արտասանությունը և այլն: Դրսևորվում են նաև գրաբարյան համակարգին աննչվող բարբառային հնչյունական հատկանիշներ, ինչպիսիք են *է-ե*, *օ-ո*, *յ-ի* գույզերի՝ գրաբարին բնորոշ հարաբերությունների այս կամ այն կերպ արտացոլումը, բազմավանկ բառերի սկզբում *ե*, *ո* պարզ ձայնավորների անհնչյունափոխ վիճակի պահպանումը և այլն: Բարբառիս հինհայերենյան բառաչերտում նկատվում է բառակազմի հայկական և հապշ փական բաղաձայններով ձևավորված հաջորդականություններում արտասանական լարվածության պահպանման կամ նվազման միտումը: Միջինհայերենյան շրջանից եկող իրողություններ են *օ*, *Ֆ*, *յ*, *հ*՝ հնչյունների գործածությունը (ամաչին երեքը՝ հիմնականում փոխառյալ բառերում), հնչույթային համակարգում տեղի ունեցած տեղաշարժերը, շեշտի հետ կապված հնչյունափոխական իրողությունների ծավալումը և նախաշեշտ վանկում ձայնավորների անկման երևույթը, միավանկ բառերի սկզբում *ե,ո* երկբարբառներից ամաչ բաղաձայնական տարրի հավելումը, ձայնավորով սկսվող բառերի սկզբում ձայնեղ *հ*-ի հավելումը, բառակազմում ձայնեղ հայկականների ու հապշ փականների գործածությունը, հնչյունական մասնավոր շատ փոփոխություններ և այլն: Բայազետի բարբառում դրսևորվող հնչյունափոխական օրինակապիությունները, որպես կանոն, ուղեկցվում են բացառություններով, շեղումներով, որոնք բխում են լեզվի բարբառային վիճակի էությունից և ներկայացնում են հինհայերենյան, միջինհայերենյան, նաև աշխարհաբարյան շրջաններին վերաբերող իրողությունների համարյա լիակատարություն:

5. Բայազետի բարբառի բառապաշարը ներառում է հայոց լեզվի զարգացման տարբեր փուլեր ներկայացնող բառաչերտեր, բարբառային բառեր, տարբեր լեզուներից, գրական հայերենից ու այլ բարբառներից արված փոխառություններ: Գրաբարի հետ ընդհանուր բառերի քանակը հասնում է մոտ 2000-ի: Բայազետի բարբառում գործառուղ և իրենց գուգահեռները միջինհայերենյան գրավոր աղբյուրներում ունեցող բառերի քանակը հասնում է մոտ 1000-ի: Դրանց մեջ զգալի քանակություն են կազմում արաբապարսկաթուրքական փոխառությունները, որոնք որոշ տեղաշարժեր են ամաչ բերել նաև բարբառի հնչյունական համակարգում: Բայազետի բարբառի աշխարհաբարյան բառաչերտը հարուստ է նոր ժամանակներին բնորոշ երևույթներ ներկայացնող կազմություններով, աշխարհաբարյան իրողություններ պարունակող բառաներով և այլն: Չզալի քանակություն են կազմում ռուսերենից կատարված փոխառությունները: Կատարվել են փոխառություններ նաև գրական լեզվից ու այլ բարբառներից:

Բարբառային հայերենի բառապաշարի առավել բնութագրական շերտը կազմող բարբառային բառերը հանդես են բերում տարածվածության տարբերություններ: Բայագետի բարբառում զգալի քանակություն են կազմում առավել ասես արևմտյան բարբառներում հանդիպող բառերը: Բարբառի բառապաշարը, հարուստ լինելով հին իրողություններին, կենցաղին ու գործունեությանը վերաբերող բառերով, հետաքրքրություն են ներկայացնում նաև այլ թեմատիկ խմբերով: Լայնորեն դրսևորվում են բազմիմաստության, իմաստափոխության, բառերի ձևաիմաստային փոխարաբերություններին վերաբերող երևույթներ: Որոշ յուրահատկություններով դրսևորվում են բառաբարդման և ածանցման՝ հայերենին հատուկ եղանակները:

6. Բայագետի բարբառի անվանական համակարգը ընդհանուր առմամբ ներկայանում է աշխարհաբար հայերենին բնորոշ իրողություններով: Բարբառի համար բնութագրական են *երևներ* հոգնակերտների գործածության որոշ չկարգաբերվածությունը, սահմանափակ գործածություն ունեցող մի շարք այլ հոգնակերտների առկայությունը, ներգոյական հոլովի բացակայությունը, սեռական և տրական հոլովների տարբերակումը որոշիչ հոդի գործածությամբ, հայցականի ձևային երկփեղկվածությունը, բացառականի՝ *ց*-ով ձևերի գերակշռությունը, եզակի և հոգնակի թվերում Ի հոլովման բացարձակ գերակշռությունը, Ու հոլովման գործառույթը միայն ձևային ու ձևաիմաստային հիմքերով, այլ, հատկապես՝ ներքին հոլովումների բառերի սակավությունը, որոշիչ հոդի կիրառությունը միայն ուղղական, տրական և հայցական հոլովներում, կրկնակի հոդառության հնարավորությունը և այլն:

7. Ընդհանուր իրողություններին ցացի՝ բարբառում արտացոլվում են լեզվի պատմության նախորդ փուլերին բնորոշ՝ անվանական համակարգին վերաբերող մի շարք այլ երևույթներ ևս: Չինհայերենյան շրջանից եկող իրողություններ են *ք, րանք, անք, ենք* հոգնակերտները, բացառականի *է*-ով ձևը, Արտաքին հոլովման դրսևորումները և այլն: Միջինհայերենյան շրջանից եկող իրողություններ են հոգնակերտ մի շարք թեքույթներ (ընդհանրապես, բոլոր հոգնակերտներն էլ իրենց կազմում ունեն հինհայերենյան շրջանից եկող տարր, սակայն հիմնականում ձևավորվել են միջինհայերենյան շրջանում), Ու հոլովման դրսևորումները, Վահոլովման բառերի բացառականի *է*-ով ձևերը, *ի* հոլովիցից առաջ բառավերջի *ա* ձայնավորի անկման երևույթը և այլն:

8. Բայագետի բարբառում ածականները բառակազմական և իմաստաբանական էական յուրահատկություններ հանդես չեն բերում: Չամեմատության աստիճանները արտահայտվում են շարահյուսական, վերլուծական ու նկարագրական եղանակներով, ածանցմամբ, բառաբարդմամբ, հնչերանգով: Դասական և

կոտորակային թվականների բարբառային ձևեր չկան: Բաշխական թվականները ձևավորվում են բացարձակ թվականի կրկնությամբ:

9. Դերանվանական համակարգում Բայ ազետի բարբառի համար բնութագրական են անձնական դերանունների՝ թեք հոլովներում գուգահեռ ձևերի արևայությունը, ցուցական դերանունների ձևաիմաստային բազմազանությունը, *ի*-ով ավարտվող ձևերի՝ եզակի թվում Ու հոլովման ենթարկվելը, սրանց թեք հոլովներում *տ* տարրի ներմուծումը, ստացական դերանունների՝ Ու հոլովման ենթարկվելը և այլն: Ցուցական դերանունները իրենց հավելվածավոր ձևերով ամռչվում են *այ ս, այ դ, այ ն* ձևերի հինհայերենյան դրսևորումներին և թեք ձևերում *սա, դա, նա* դերանունները ներկայացնող իրողություններ չունեն: Հինհայերենյան շրջանից են գալիս նաև *վոն* (ո) ուղղականը և *վիր* (ոյր) սեռականը, միջինհայերենյան շրջանից եկող իրողություններ են անձնական դերանունների *ի, իկ* հավելվածներով, ինչպես նաև կրճատձևերը և այլն:

10. Բայ ազետի բարբառի բայական համակարգը ևս ընդհանուր ամամբ ներկայանում է աշխարհաբար հայերենին բնորոշ իրողություններով: Գործածվում են բաղադրական-քերականական *ն, էն, ան* ածանցները: Բայնունի երկու խոնարհում՝ Ե և Ա: Ե խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող ներգործական սեռի բայերը ունենում են անցյալի ինչպես անցոյական, այնպես էլ ցոյական հիմք: Բայի սեռը հաճախ պայմանավորված է բայիմաստով, կարող է դրսևորվել ածանցմամբ, բայական համապատասխան վերջավորություններով, նաև շարահյուսական միջոցներով: Կրկնաժամբ բայերը որոշ դեպքերում ըստ սեռի տարբերակվում են վերջավորություններով, այլ դեպքերում նույն ձևով կարող են արտահայտել տարբեր սեռերի իմաստներ: Բարբառը չունի համակատար և ապակատար դերբայներ: Չունենալով ներգոյական հոլով՝ Բայ ազետի բարբառնունի անկատար դերբայ և սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը արտահայտում է վերլուծական եղանակներով: Բայ ազետի բարբառում ժխտական դերբայի ձևավորումն ունեցել է յուրօրինակ ընթացք: Բարբառսունի նաև ձևի դերբայ: Ենթարկական ապառնու ձևերը լայն կիրառություն ունեն պատմական ներկայի իմաստով: Հարկադրական եղանակի ձևերը Բայ ազետի բարբառում արտահայտում են նաև սահմանական եղանակի համապատասխան ժամանակների իմաստներ և այլն:

11. Բայ ազետի բարբառում դրսևորվում են լեզվի պատմության նախորդ փուլերին բնորոշ մի շարք բայական հատկանիշներ: Հինհայերենյան շրջանից եկող հատկանիշներ են ներգործած և և կրավորած և խոնարհումների տարբերակումը, *ուկ* վերջավորությամբ հարակատարի դրսևորումը, Ե խոնարհման ներգործական սեռի պարզ բայերի եզակի հրամայականի արտահայտությունը *ա* վերջավորությամբ, անկանոն բայերի որոշ ձևեր և այլն: Միջինհայերենյան շրջանից եկող իրողություններ են *եմ* բայի *ա* ձևը, պատճառական *ցըն* ածանցը, վաղակատարի՝ *եր*

վերջավորությամբ ձևը, Ախոնարի մանբայերի դեպքում *ան* ածանցի դիմաց *Ն*-ի գործածությունը, *Կը* եղանակիչով ձևերի՝ պատմական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ արտահայտելու հատկությունը, անկանոն բայերի որոշ ձևեր և այլն:

12. Բայագետի և շրջակա բարբառներն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Իբրև հայերենի դրսևորումներ՝ բոլոր բարբառների հիմքը կազմում են ընդհանրահայերենյան իրողությունները: Պատմաաշխարհագրորեն մերձավոր լինելը արտահայտվում է նաև բարբառային ընդհանուր հատկանիշներով, որոնցից են բառակզբում ձայնավորից առաջ հավելական *հ*-ի առաջացումը, շեշտակիր վանկում *այ > է* զարգացումը, միավանկ բառերի սկզբնային *ե*-ից առաջ *յ*-ի և *ռ*-ից առաջ շրթնային տարրի հավելումը, նոր փոխառություններում ձայնեղ հպականների ու շփականների դիրքային սահմանափակումների վերացումը, փոխազդեցական հնչյունափոխական ընդհանուր ու մասնավոր բնույթի մի շարք իրողություններ, *թ* հոգնակերտից առաջ *ա > է* հերթագայությունը, ընդհանուր մի շարք հոգնակերտների գործածությունը, սեռական և տրական հոլովների տարբերակումը որոշիչ հոդով, ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայությունը, ներգործական սեռի բայերով հարակատար ժամանակաձևեր չկազմելը, բարբառային ընդհանուր բառաշերտը, բառաբարդման ու ածանցման եղանակները և այլն: Միայն Բայագետի բարբառին բնորոշ հատկանիշները հազվադեպ են (շրթնային *ա* ձայնավորի դրսևորման օրինաչափություն, *ի* հավելվածով ցուցական դերանունների՝ Ու հոլովմամբ հոլովում, ստացական դերանունների՝ հավելյալ մասնիկներով գուգահեմ կազմությունների բացակայություն):

13. Լեզվի զարգացման նախորդ փուլերից եկող հատկանիշներով ավելի շատ ընդհանրություններ Բայագետի բարբառն ունի Վանի, Դիադինի, Մշո և Խոյ-Մարաղայի բարբառների հետ (*հ-խ* համապատասխանություն, երկբարբառայինների, քմայնացած ձայնավորի առկայություն, վերջնավանկային շեշտ և ձայնավորների անկում բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում, ներգոյական հոլովի բացակայություն, *է*-ով բացառականի ձևերի առկայություն, *ա* հոլովիչի դրսևորում հատուկ տեղանունների բացառական հոլովում, դերանունների թեք հոլովաձևերում *ի*-ով և *իկ*-ով դերանվանական ձևերի առկայություն, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակում, *ուկ*-ով հարակատար և *ր*-ով վաղակատար դերբայների առկայություն և այլն), որը վկայում է բարբառային այդ միավորների հետ Բայագետի բարբառի՝ հնից եկող մերձավորություն մասին: Մինչդեռ Արարայն բարբառի հետ նման ընդհանրությունները քիչ են (շնչեղ ձայնների առկայություն /բնորոշ է նաև նաև Դիադինի և Մշո բարբառներին/, Ու հոլովման դրսևորումներ, Ան և Ոջ հոլովումների սակավ գործածականություն, պատճառական բայերի կազմություն *ցըն* մասնիկով), որը թույլ է տալիս ենթադրել, որ Արարայն բարբառի հետնունյն բարբառախմբում Բայագետի բարբառն ընդգրկելու հիմք

դարձած ընդհանրությունները հիմնականում սկզբնավորվել են միջին հայերենյան շրջանի վերջերում և ձևավորվել աշխարհաբարյան շրջանում տեղի ունեցած ընդհանուր զարգացումների կամ ազդեցությունների արդյունքում:

14. Բայազետի բարբառը հարևան բարբառներից կրել է որոշակի ազդեցություններ: Այդպիսիք առկա են և՛ հնչյունական համակարգում (° հնչյունի դրսևորումներ հին և նոր բառաչերտերում, որոշ դեպքերում >ռ-ից հետո նախնական ձայնեղ հապափակների դիմաց պարզ խուլերի դրսևորում, առանձին բառերի ձևավորմանյունրահատկություններ), և՛ բառապաշարում, և՛ անվանական (g-ով բացանական, հոլովական քարացած որոշ ձևեր) ու բայական (վաղակատար ներկայի հոգնակի երրորդ դեմքում ածվերջավորությունամբ դերբայական ձևի գործառություն, պատճանական բայերի եզակի հրամայականի ոչ թեական հիմքով ձևեր) համակարգերում: Սակայն ամենաեականը պետք է համարել, մեր ենթադրությունամբ, Արարտյան բարբառի ազդեցությունամբ անկատար դերբայի և դրանով կազմված դիմավոր ձևերի առաջացումը թերևս աշխարհաբարյան շրջանում, որի արդյունքում Բայազետի բարբառը, ամենայն հավանականությամբ, Կը ճյունդից անցում է կատարել Ում ճյունդի:

15. Բազմահատկանիշ դասակարգման 100 հատկանիշների շրջանակում Բայազետի բարբառը բնութագրվում է 37,5 միավոր հատկանիշներով: Շրջակա բարբառներից Բայազետի բարբառին առավել մերձավոր է Դիադիկի բարբառը՝ տարբերությունների 14,5 ցուցիչով, սակայն այս երկու միավորները նույն բարբառի մեջ միավորվել չեն կարող, քանի որ իրականում տարբերվում են հատկանիշների ավելի մեծ քանակությամբ: Մյուս բարբառները գտնվում են մոտավորապես հավասար հեռավորության վրա: Զառոդաբար Բայազետի բարբառին ավելի մոտ է Արարտյան բարբառը՝ տարբերությունների 28,5 ցուցիչով: Ըստ 5-րդ դարում հնարավոր համարված հնչյունաքերականական գուգաբանությունների՝ Բայազետի բարբառին ամենամոտը Դիադիկի և Խոյ-Մարտայի բարբառներն են, իսկ տարբերությունների ամենամեծ ցուցիչն ունի Արարտյան բարբառը: Բայազետի բարբառը գուգակցում է արևելյան և արևմտյան բարբառային միավորներին բնորոշ հատկանիշներ և զարգացումներ, ընդ որում՝ առավելաբար արևմտյան կամ արևելյան բարբառներին հատուկ հատկանիշների մեջ արևմտյան բարբառներին բնորոշ իրողությունները քանակով էականորեն գերազանցում են արևելյաններին բնորոշ իրողություններին: Ուշագրավ է հատկապես հնչյունական հատկանիշների առումով Բայազետի բարբառի զգալի մերձավորությունը արևմտյան բարբառներին: Բայազետի բարբառը բառապաշարի առումով ևս ավելի սերտ առնչություններ ունի արևմտյան կամ Կը ճյունդի Դիադիկի, Վանի, Սշոբարբառների հետ:

Այսպիսով, Բայազետի բարբառը Արարտյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում ընդգրկելու հանգամանքը դառնում է վիճահարույց, և բարբառիս դիրքը ճշգրտելու համար

առաջ է գալիս բազմահատկանիշ դասակարգման սկզբունքների հետագամշակման ու ճշգրտման անհրաժեշտությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրատարակումներում.

1. Կատվալյան Վ., Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., «Ասողիկ» հրատ., 2016, 534 էջ:
2. Կատվալյան Վ., Յայ բարբառագիտության հարցեր, Ե., «Յայ աստան» հրատ., 2014, 232 էջ:
3. Կատվալյան Վ., *Բ՞ուրն ախրն՞ք - չ՞նք* (Չվարճապատումներ Բայազետի բարբառով), Ե., «Յայ աստան» հրատ., 2009, 232 էջ:
4. Կատվալյան Վ., Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը, Ե., «Ապրիլ» հրատ., 2006, 104 էջ:
5. Կատվալյան Վ., Բարբառ և բարբառային լեզու, Աբեղյանսկան ընթերցումներ, Ե., ԵՊՀ հրատ., 2016, էջ 25-35:
6. Կատվալյան Վ., Բարբառի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Ե., «Ձանգակ -97» հրատ., 2008, 1, էջ 150-154:
7. Կատվալյան Վ., Ընդհանուր հայերենյան լեզվական հատկանիշները բարբառներում, Ջահուկյանսկան ընթերցումներ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, էջ 90-97:
8. Կատվալյան Վ., Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ, Յայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները Յայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուլցումների ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 273-277:
9. Կատվալյան Վ., Բայազետի բարբառը ըստ բարբառների բազմահատկանիշ դասակարգման, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Ե., «Ձանգակ -97» հրատ., 2010, 2, էջ 181-186:
10. Կատվալյան Վ., Խոսվածքային առանձնահատկություններ Բայազետի բարբառում, Յայ գիտական բարբառագիտության 100-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուլցումների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2015, էջ 9-16:
11. Կատվալյան Վ., Արևելահայ և արևմտահայ լեզվական իրողությունները Բայազետի բարբառում, «Արդի բանասիրության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2015, «Վարդան Ակրտչյան Ֆեոդորի» ԱՁ, էջ 130-138:

12. Կատվալյան Վ., Հին հայերենյան իրողություններ Բայազետի բարբառում, Ջահուկյանական ընթերցումներ – 2014. Միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 77-83:
13. Կատվալյան Վ., Միջին հայերենյան իրողություններ Բայազետի բարբառում, Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 49-61:
14. Կատվալյան Վ., «Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, ԵՊՀ հրատ., 2012, 2, էջ 48 – 63:
15. Կատվալյան Վ., Բայազետի բարբառի ձայնավորների ընդհանուր բնութագիրը, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2013, Էդիթ Պրինտ, էջ 179-189:
16. Կատվալյան Վ., Հ – Խ համապատասխանությունը հայերենի բարբառներում, Ե., Պատմաբանասիրական հանդես, 3, 2007, էջ 163-172:
17. Կատվալյան Վ., Բայազետի բարբառում բառակզբի բաղաձայնական հաջորդականությունների մասին, Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 170-178:
18. Կատվալյան Վ., Բայազետի և պատմաաշխարհագրորեն մերձավոր բարբառների բառային հիմնական տարբերությունները և ընդհանրությունները, Լեզու և լեզվաբանություն, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 1, էջ 18-30:
19. Կատվալյան Վ., Միջին հայերենյան շրջանի փոխառություններ Բայազետի բարբառում, Ե., Ջահուկյանական ընթերցումներ. Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., 2016, էջ 95-103:
20. Կատվալյան Վ., Ռուսերեն փոխառություններ Բայազետի բարբառում, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 81-88:
21. Катвалян В., Падежные особенности в диалектном армянском языке, Language and Culture, Scientific Peer Reviewed Journal, Kutaisi, 13, 2015, էջ 63-67:
22. Կատվալյան Վ., Ցուցական դերանունների դրսևորման առանձնահատկություններ հայերենի բարբառներում, Հայկազետի հայագիտական հանդես, հ. ԼԱ., ՊԵՅՐԼԵ, հրատ. Հայկ. համալս. հայագիտամբիոնի, 2011, էջ 413-425:
23. Կատվալյան Վ., Անկայացման կարգը Բայազետի բարբառում՝ համեմատությամբ հարևան բարբառների, «Հայոց լեզվի պատմության հարցեր». Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, Ստեփանակերտ, «Դիզակալյուս» հրատ., 2008, էջ 114-118:

24. Կատվալյան Վ., «Եմ» բայը Բայագետի բարբառում, Բանբերեր. Վ.Բրյունովի անվան պետ. լեզվաբ. համալս., Ե., ԵՊԼՀ «Լինգվա» հրատ., 2012, 2, էջ 94-98:
25. Կատվալյան Վ., Բայի սեռը Բայագետի բարբառում, Բանբեր Մատենադարանի, 19, Ե., «Նաիրի» հրատ., 2012, էջ 379-387:
26. Կատվալյան Վ., Յարակատար դերբայը Բայագետի և մերձավոր բարբառներում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 2, 132-138:
27. Կատվալյան Վ., Կապերն ու շաղկապները Բայագետի բարբառում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, ԳՊՀ հրատ., 2015, էջ 379-384:
28. Կատվալյան Վ., Արարայան և Բայագետի բարբառների փոխհարաբերությունները, Ե., Պատմաբանասիրական հանդես, 2009, 2-3, էջ 145-157:
29. Կատվալյան Վ., Բայագետի և Դիարինի բարբառների փոխհարաբերությունները, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., «Ձանգակ» հրատ., 2012, էջ 115-129:

Катвалян Виктор Липаритович
Баязетский диалект и его языковые отношения
с соседними диалектами

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.02.01 – Армянский язык.

Защита состоится 19. 12. 2016 г. в 15⁰⁰ на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике при Институте языка им. Р. Ачаряна Национальной академии наук РА по адресу 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

На современном этапе развития армянской диалектологии наиболее актуальными являются рассмотрение теоретических вопросов, системное исследование диалектов в синхроническом и диахроническом аспектах, сравнительно-историческое исследование близких диалектов и диалектных групп.

Всестороннее исследование фонетической, лексической и грамматической систем баязетского диалекта, выполненное в синхроническом и диахроническом планах, а также их сравнение с окружающими диалектами, не только преследует цель обнаружения недостающих фактов по армянским диалектам, но также может иметь важное значение в изучении истории и структуры армянского языка вообще. В диссертации, исходя из целей и задач исследования, выдвигаются и рассматриваются некоторые вопросы теоретического характера, делаются соответствующие наблюдения и выводы.

Работа состоит из введения, пяти глав, заключения, списка использованной литературы и приложения.

В первой главе (“Баязетский диалект и диалекты, близкие к нему в историко-территориальном плане”) представляются историко-географические характеристики ареала возникновения и территориального распространения баязетского диалекта, современные границы его функционирования. Дается критический обзор истории изучения диалекта в арменистике. Современная система диалекта сложилась на его исторической родине в окружении соседствующих диалектов – диадинского, ванского, мушского, хой-марагинского и араратского – в условиях постоянных контактов и взаимовлияний, следовательно, установка на рассмотрение их взаимоотношений диктует необходимость представления их общих характеристик. Обращается внимание на вариативные проявления диалекта, обусловленные своеобразием диалектной речи, социальной неоднородностью носителей диалекта, их территориальной разрозненностью, а также различными историческими обстоятельствами.

Во второй главе (“Фонетические особенности баязетского диалекта в сравнении с окружающими диалектами”) выявляются основные особенности фонетической системы диалекта, проводится ее фонетико-фонологический анализ, представляются звуковые изменения и просодические особенности. Рассматриваются вопросы исторического развития системы, ее взаимоотношений со схожими системами окружающих диалектов.

В третьей главе (“Лексические особенности”) рассматривается лексика баязетского диалекта с точки зрения выявления в ней различных исторических пластов, исследуется собственно диалектная лексика, лексические заимствования из литературного армянского языка и окружающих диалектов. Диалектная лексика представляет значительный интерес с точки зрения различных тематических групп – с их характерными семантическими и словообразовательными особенностями: многозначностью, формально-семантическими взаимоотношениями, изменениями

в семантике. В баязетском диалекте наблюдаются некоторые своеобразные черты в проявлении словообразовательных особенностей армянского языка.

В четвертой главе (“Морфологические особенности баязетского диалекта по сравнению с окружающими диалектами”) исследуются именная и глагольная системы диалекта в процессе их исторического развития и взаимодействия с соответствующими системами соседних диалектов. Неизменяемые части речи представляют значительный интерес наличием ряда семантико-функциональных особенностей.

В пятой главе (“Сопоставительно-статистический анализ баязетского и взаимосвязанных с ним диалектов”) на основании 100 фонетико-грамматических изоглосс (признаков) выявляется статистическая картина взаимоотношений баязетского и смежных диалектов. С помощью лексико-статистического анализа представляются основные различия и схождения между лексическим составом исследуемых диалектов.

Результаты исследования обобщаются в заключении, в котором представляются основные особенности баязетского диалекта, очерчивается картина его исторического развития и взаимоотношений с окружающими диалектами, а также подчеркивается необходимость дальнейшей разработки и уточнения принципов многопризнаковой классификации.

Приложение содержит: ряд парадигм именного склонения; общее описание парадигмы глагольного спряжения; таблицы, отражающие взаимоотношения и статистическую картину диалектных изоглосс; словарь баязетского диалекта, содержащий 6500 лексических единиц; словарь, содержащий примерно 2000 слов древнеармянского языка в переводе на баязетский диалект; около 1000 слов, засвидетельствованных с среднеармянского периода и в настоящее время употребляемых в баязетском диалекте, а также другие материалы.

Viktor Katvalyan

The Dialect of Bayazet and Its Language Relations with Surrounding Dialects

The thesis claiming a scientific degree of a doctor of philological sciences on the specialty 10. 02. 01- Armenian Language.

The defense will be held on 19.12.2016, 15:00 at the session of Specialized Council on Linguistics 019 HAC at the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences of RA. Address: 15. Grigor Lusavorich. Yerevan, Armenia.

SUMMARY

In the modern stage of the development of Armenian dialectology, its contemporary issues comprise questions on the theory of dialectology, a comprehensive synchronic and diachronic investigation of separate dialects, a comparative and historical study of close dialects and dialect groups. The comprehensive study of the phonetic, grammatical and lexical systems of the dialect of Bayazet, carried out synchronically and diachronically and compared to the neighbouring dialects, not only serves the purpose of

filling in the gap in the study of the dialectal Armenian language, but it can also be of a greatest importance for the history of the Armenian language, and for the study of Armenian, in general. Depending on the objectives and subject-matters of the research, also a number of theoretical issues are raised and discussed, observations and conclusions are made in the thesis.

The thesis consists of an introduction, five chapters, conclusions, a list of references and an appendix.

The first chapter (“The Dialect of Bayazet and the Dialects Contiguous to It Historically and Geographically”) presents the historical and geographical description of the homeland territory of the dialect of Bayazet, its expansion area shifts and its present-day boundaries. It gives a critical analysis of references to this dialect made in Armenian Linguistics. The current system of this dialect was formed in the territory of its historical motherland, being in permanent contacts and interactions with neighbouring dialects of Diadin, Van, Mush, Khoy-Maragha and Ararat; therefore with the aim of observing the relationships with those dialectal units, it became necessary to give their general characteristics. The chapter refers to the varieties of the dialect concerned, conditioned by the nature of the dialectal language, by the social heterogeneity of the speakers and their regional fragmentation, as well as by other historical circumstances.

The second chapter (“Phonetic Features of the Dialect of Bayazet Compared to Its Surrounding Dialects”) reveals the phonetic features of the dialect, contains phonetic and phonemic analyses and observations, presents intonation and sound-interchange realities. A reference to the historical development of the system is made, and the relations with neighbouring similar systems are reviewed.

In **the third chapter** (“Lexicological Realities”), the vocabulary of the dialect of Bayazet is observed according to the layers in different stages during the historical development of the language; dialectal words and borrowings from its surrounding dialects and literary Armenian language are examined. The vocabulary of the dialect is of particular interest for its various lexico-semantic groups, their semantic and word-formation peculiarities, for the phenomena relating to the polysemy, change of meaning, and morphosemantic lexical relations. The dialect of Bayazet uses the same means of compounding and derivation peculiar to Armenian but with some specific features.

The fourth chapter (“Morphological Features of the Dialect of Bayazet Compared to Its Surrounding Dialects”) analyzes the nominal and verbal systems of the dialect considering the historical process of its formation, the relations with its surrounding dialectal systems and their influences. Invariable/uninflected parts of speech are of particular interest for a number of semantic-functional peculiarities.

The fifth chapter (“Isoglossal Statistical Investigation of the Dialect of Bayazet and Dialects Contiguous to It”) reveals the statistical overview of interrelations between the dialect of Bayazet and its surrounding dialects according to 100 phonetic and grammatical isoglosses, the basic lexical differences and similarities are presented through a lexico-statistical investigation.

The findings of this research are summarized in the conclusions which present the basic features of the dialect of Bayazet, the outline of its historical development, and the general overview of its interrelations with neighbouring dialects. It is pointed out that there is a need for further development and adjustment of principles for multi-feature classification of dialects.

The appendix comprises some declension paradigms of neighbouring dialects, the general description of the verb conjugation paradigm in the dialect of Bayazet, tables presenting the isoglossal-statistical overview and interrelations between the dialects, a vocabulary of the dialect of Bayazet (containing over 6500 entries), a vocabulary of Grabar (Old Armenian) and the dialect of Bayazet (over 2000 entries), a glossary of words from Middle Armenian period existing in the dialect (over 1000 entries), text samples in the dialect of Bayazet, etc.